7 ՅՈՒՆԻՍ 2013 ՈՒՐԲԱԹ 94(5177)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Միայն թե Լիցկայի փոխարեն մի նոր Լիցկա չդառնա մարզպետ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Որպեսզի մենք գլուխներս բարձրացնենք մեր ներքին խնդիրներից ու սկսենք մտածել փոխվող տարածաշրջանի ու այնտեղ մեր տեղի մասին, որքան էլ տարօրինակ հնչի, էլի պետք է նախ մեր ներքին խնդիրները կարգավորենք: Վերջին շրջանում տարածաշրջանում իսկապես այնպիսի գործընթացներ են, որ արժե վերլուծել-հասկանալ, առաջ նայել, անելիք իմանալ: Միայն ինչ արժե այս պահին Թուրքիայում տեղի ունեցողը: Սակայն, իսկապես, մենք այնքան ներքին խնդիր ենք կուտակել, որ դրանք փակել են մեր տեսադաշտը՝ դարձնելով մեզ կարճատես ու մեր քթից այն կողմ չտեսնող: Մեր խնդիրները շրջանցել եւ ուրիշի խնդիրները տեսնելը հնարավոր չէ, եւ ճիշտ էլ չէ: Մենք մեր ներքին խնդիրները լուծելով պիտի հորիզոն ազատենք՝ հեռուն տեսնելու:

Տես էջ 2

# Օրինագծեր, որոնք դեմ են հայկական ընտանիքին

Առողջ հասարակության բարձրագույն արժեքն ընտանիքն է: Խարխլելով ընտանիքի մոդելը՝ խարխլում են նաեւ հասարակության կառուցվածքը: Մասնավորապես միասեռականների ամուսնությունները ուղղված են հենց քրիստոնեական ընտանիքի կառուցվածքը քանդելուն, հետեւաբար եւ առողջ հասարակությունը վերացնելուն:

Մարդկության զանգվածային փոփոխության ծրագիրը Հայաստանում նույնպես սկսել է հանդես գալ օրենքի նախագծերի ու օրինագծերի տեսքով: Խտրականության դեմ պայքարի օրինագիծը, որը դեռ վերջնական տեսքի չի վերածվել ու դեռ չի մտել Ազգային ժողով, եւ կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների մասին օրինագիծը, որը ԱԺ-ում 3-րդ ընթերցումն արդեն անցել է ու սպասում է հանրապետության նախագահի ստորագրությանը, հենց ապացույցն են, որ կա համակարգային մի ճնշում ի վնաս նորմալ, առողջ ընտանիքների:

«Քրիստոնյաներն ընդդեմ մարդկանց համարակալման» միության ղեկավար **Խաչիկ Ստամբոլցյանը** երեկ «Իրատես դե ֆակտո» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ խտրականության դեմ պայքարի օրինագծի կապակցությամբ հանդիպել է ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանին ու վերջինից բառացիորեն ստացել հետեւյալ պատասխանը. «Այո, Եվրոպան մեզ պարտադրում է»: Այսինքն՝ Եվրոպա ինտեգրվելու մի նախապայմանն էլ միասեռականներին օրենքի ուժով ազատություն տալն է: Խաչիկ Ստամբոլցյանը շեշտում է, որ Հոլանդիայում նույնիսկ ուզում են օրինականացնել մանկապղծության ու արյունապղծության մասին նախագծերը, եւ Եվրոմիության մեջ մտնելու գինը դառնում են ոչ միայն միասեռականներին ընդունող, այլեւ մանկապղծությունն ու արյունապղծությունն ընդունող օրենքները: Ըստ Խաչիկ Ստամբոլցյանի՝ Հոլանդիայում նույնիսկ գոյություն ունի մանկապիղծների կուսակցություն:

Հայաստանում մտավախությունը, ինչպես նշեցինք, առայժմ երկու նախագծերի հետ է կապված: Խտրականության դեմ պայքարի օրինագիծը մշակել է մարդու իրավունքների պաշտպանը, կամ, ինչպես Խաչիկ Ստամբոլցյանն է ասում, նրան օրինագիծը պարզապես թելադրել են, ոչ թե ինքն է մշակել: Օմբուդսմենը առայժմ չի ստորագրել, բայց պետք է ստորագրի սեպտեմբերին, հիմա նախագիծն անցնում է միջազգային փորձագիտություն Վենետիկի հանձնաժողովում: Այնուամենայնիվ, դեռ պարզ չէ՝ նախագիծը կներկայացվի՞ ԱԺ, թե՞ ոչ:

Ինչ վերաբերում է միասեռականների ամուսնություններին, ապա դրան կհաջորդի նրանց կողմից երեխաներ որդեգրելը: Ըստ պարոն Ստամբոլցյանի՝ Եվրոպայում մի երեխա որդեգրելու համար ծախսվում է 20-28 հազար եվրո: Միասեռական ընտանիքների դեպքում կծախսվի ավելի շատ գումար, ու փաստորեն այս գումարները կպտտվեն երեխաներ որդեգրելու շուկայում, որը բավականին մեծ է: Խաչիկ Ստամբոլցյանը գտնում է, որ օրինագծերի դեմ միավորվել է հարկավոր, լինի ցույցերի, թե ստորագրահավաքների ձեւով, հարկ է կանխել դրանց օրենքի ուժ ստանալը:

Տես էջ 3

# Սիրիային նվիրված կոնֆերանսը կկայանա հուլիսին

Արաբական պետությունների լիգայի եւ ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Լախդար Բրահիմին հայտարարել է, որ Սիրիային նվիրված հաշտության կոնֆերանսը հունիսին չի կայանա: Միջոցառման կազմակերպիչներն են ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը:

Բրահիմին ասել է, որ սիրիական ընդդիմությունը եւ պաշտոնական Դամասկոսը դեռ վերջնական համաձայնություն չեն տվել Ժնեւում կայանալիք կոնֆերանսին իրենց մասնակցության առնչությամբ: Այդ պատճառով հանդիպման անցկացումը հետաձգվում է մինչեւ հուլիս, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Ֆրանսպրեսը իր հերթին մեջբերում է հատված «Ալ Ղաիդայի» առաջնորդ Այման ալ Զաուահիրիի հունիսի 6-ի կոչից, որով նա սիրիացիներին հորդորում է միավորվել նախագահ Բաշար Ասադին տապալելու նպատակով: Զաուահիրին մասնավորապես պնդում է, թե ԱՄՆ-ը մտադրվել է Սիրիայում ամերիկամետ վարչակարգ հաստատել հանուն Իսրայելի շահերի պաշտպանության:

Իսրայելի պետության ստեղծման 65-ամյակի առթիվ հունիսի 6-ին իսլամիստական կայքերում տարածվել է Զաուահիրիի ելույթի 22-րոպեանոց ձայնագրությունը, որտեղ նա «Լեւանտի առյուծներին» կոչ է անում միավորվել Ասադի տապալման «դրվատելի նպատակի շուրջը» եւ «վեր կանգնել դավանանքային պատկանելություններից»:

# Սյունիքի մարզպետի պաշտոնանկության երկար սպասված որոշումը

ՀՀ կառավարությունը երեկ Սուրեն Խաչատրյանին ազատեց Սյունիքի մարզպետի պաշտոնից՝ իր դիմումի համաձայն: Ավելորդ է ասել, որ այս որոշմանը ինչպես Սյունիքի, այնպես էլ ամբողջ Հայաստանի բնակչությունը վաղուց էր սպասում: Մնում է միայն հուսալ, որ չի կրկնվի Գագիկ Բեգլարյանի նախադեպը, երբ նա հարկադրաբար հրաժարական տվեց Երեւանի քաղաքապետի պաշտոնից՝ այլ անձի նկատմամբ ուժ գործադրելու համար, բայց մեկ-երկու տարի հետո նշանակվեց տրանսպորտի եւ կապի նախարարի պաշտոնում:

Ա. Ս.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Սկսվեց կարկուտից տուժած արմավիրցիներին կառավարության աջակցության ծրագիրը

Կառավարության երեկվա նիստը սկսվեց վարչապետ **Տիգրան Սարգսյանի** ելույթից, որտեղ նա տեղեկացնելով նախօրեին իր՝ Արմավիրի մարզ կատարած այցելության մասին, նշեց, որ պետք է հետեւողական լինել «որպեսզի կարկուտի հասցրած վնասների հետ կապված մեր օժանդակությունը տեղ հասնի, եւ գյուղացիներն զգան, որ պետությունն իրենց կողքին է»:

Վարչապետը առանձնացրեց երկու խնդիր, որոնց վերաբերյալ պետք է ընդունվեն համապատասխան որոշումները: Առաջինը՝ սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակների ճշտումը եւ նրանց պետական օգնություն տրամադրելու, երկրորդը՝ գյուղացիներին ջրի վարձի եւ հողի հարկի վճարների փոխհատուցման ու սոցիալապես անապահով խմբերին բացահայտման մասին:

Մասնավորապես, որոշվեց Արմավիրի մարզի կարկտահարությունից 100 տոկոս տուժած քսաներեք գյուղերի սոցիալապես անապահով 1606 ընտանիքներին 50-հազարական դրամ հրատապ միանվագ օգնություն ցուցաբերել: Այնուհետեւ կառավարությունը որոշեց հողի հարկի եւ ոռոգման ջրի վարձավճարի փոխհատուցման նպատակով Արմավիրի մարզպետարանին 207 մլն դրամ հատկացնել:

Արմավիրցիները վարչապետին նաեւ տեղեկացրել էին, որ կարկուտից տուժած տնտեսություններից մի քանիսը ոռոգման նպատակով օգտագործում են խորքային հորերի ջուրը, ինչն էլ նկատի ունենալով՝ Տիգրան Սարգսյանն առաջարկեց փոխհատուցել նաեւ այդ տնտեսությունների էլեկտրաէներգիայի վարձը:

Արմավիրի մարզին առնչվող մյուս խնդրի ՝ հակակարկտային նոր կայանների տեղադրման համար էլ արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացվեց 350 մլն դրամ: Արտակարգ իրավիճակների նախարարը վարչապետին հավաստիացրեց, որ հակակարկտային կայանները մարզում կտեղադրվեն երեք ամսվա ընթացքում:

Ա. Ս.

Տես նաեւ էջ 8

# Միջազգային աջակցությունը քաջալերում է թուրք ցուցարարներին

## *Մինչդեռ Էրդողանը նրանց անվանել է «թափթփուկ»՝ հայտարարելով, որ Թուրքիայում վերջ է տալու հասարակության «սերուցքի» արտոնություններին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ



**Մայիսի 27-ի լույս 28-ի գիշերը Ստամբուլի Թաքսիմ հրապարակի զբոսայգում ծայր առած եւ Թուրքիայի 67 քաղաքներում տարածված բողոքի ցույցերը, որոնք ուղեկցվում են անկարգություններով եւ ոստիկանության հետ բախումներով, թեւակոխեցին 10-րդ օր: Բախումներում առ այսօր սպանվել է 2 ցուցարար, ավելի քան 4100-ը վիրավորվել: Վիրավորվածներից 43-ի վիճակը ծանր է:**

Բախումներում վիրավորվել են նաեւ ոստիկաններ, որոնց թիվը, պաշտոնական տվյալներով, հասնում է 50-ի: Այդ ընթացքում, ինչպես նախորդ օրը նշեց Թուրքիայի ներքին գործերի նախարար Մուամմեր Գյուլերը, հունիսի 5-ի տվյալներով, ցուցարարների հարձակումից տուժել են 280 առեւտրաֆինանսական օբյեկտներ եւ արհեստանոցներ, վարչական 6 շենք, մեկական բնակարան ու ոստիկանատուն, վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության քաղաքային 11 վարչություն, 103 ոստիկանության եւ 207 սեփական ավտոմեքենա, ներառյալ մասնավոր ընկերության եւ քաղաքապետարանին պատկանող երթուղային ավտոբուսներն ու շտապօգնության մեքենաները:

Թուրքիայում ընդդիմությունը Ժողովրդա-հանրապետական կուսակցության գլխավորությամբ երկրով մեկ տարածված ցույցերի համար ուղղակի մեղադրում է վարչապետ Էրդողանին, ԱՄՆ-ը, Եվրոմիությունը, ՄԱԿ-ն ու միջազգային այլ կառույցները՝ Էրդողանի կառավարությանը, թե ոստիկանությանը թույլ է տվել անհամաչափ ուժ գործադրել ցուցարարների դեմ: Ցուցարարները Էրդողանին անվանում են բռնապետ, պահանջում կառավարության հրաժարականը եւ երկխոսության համար վերջինի առջեւ նախապայման են դնում, որ վարչապետ Էրդողանը հրաժարվի Աթաթուրքի անվան մշակույթի պալատը Թաքսիմ հրապարակի վերակառուցման շրջանակում քանդելու մտադրությունից:

Տես էջ 5

ԱԶԳ **Ընթացիկ**

# Ռասիզմի ու այլատյացության դեմ պայքարը՝ առաջնահերթություններից մեկը

Հունիսի 6-ին Վիեննայում աշխատանքային այցելությամբ գտնվող արտգործնախարար, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահ Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստին՝ ելույթ ունենալով Եվրախորհրդի առջեւ ծառացած խնդիրների, Եվրախորհուրդ-ԵԱՀԿ համագործակցության, ԵԽ-ում Հայաստանի նախագահության առաջնահերթությունների վերաբերյալ:




ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ անդրադառնալով Եվրոպայի խորհրդի եւ ԵԱՀԿ միջեւ համագործակցությանը՝ ԵԽ Նախարարների կոմիտեի նախագահը նշել է. «Ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու ջանքերում Եվրոպայի խորհրդի հիմնական գործընկերներից է ԵԱՀԿ-ն, եւ երկու կազմակերպությունների միջեւ համագործակցության մակարդակը, որն արտահայտվում է խորհրդակցությունների եւ բարձրաստիճան հանդիպումների մշտական ձեւաչափով, դրա ապացույցներից մեկն է»:

2004թ.-ից, ըստ Նալբանդյանի, համագործակցությունն ամրապնդվել է հատկապես ազգային փոքրամասնությունների պաշտպանության, ահաբեկչության, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի եւ հանդուրժողականության խթանման ոլորտներում:

Եվրախորհուրդը եւ ԵԱՀԿ-ն սերտ համագործակցություն են հաստատել մի շարք այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են լրատվամիջոցների ազատությունը, ընտրությունների դիտարկումը: Երկու կազմակերպությունների միջեւ փոխգործակցությունը զարգանում է նաեւ որոշ անդամպետություններում, որտեղ երկուսն էլ ներկայացուցչություններ ունեն:

Նալբանդյանը ներկայացրել է, որ Եվրախորհրդում Հայաստանի նախագահությունն ուշադրության կենտրոնում է պահելու Եվրոպայի խորհրդի եւ ԵԱՀԿ-ի ուղղորդված եւ արդյունավետ համագործակցությունն առավել զարգացնելուն ուղղված քայլերը:

ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստում ելույթ ունեցան նաեւ Եվրոպական միության, Ռուսաստանի, Միացյալ Նահանգների, Անդորրայի, Վրաստանի, Բելառուսի, Շվեյցարիայի պատվիրակությունների ղեկավարները, որոնք, շնորհավորելով նախարար Նալբանդյանին ԵԽ Նախարարների կոմիտեի նախագահությունը ստանձնելու կապակցությամբ, իրենց երկրների աջակցությունը հայտնեցին Եվրախորհրդում Հայաստանի նախագահության առաջնահերթությունների իրականացմանը:

ԵԱՀԿ-ում ԵՄ ներկայացուցիչն իր խոսքում շնորհավորելով Հայաստանին ԵԽ Նախարարների կոմիտեի նախագահությունը ստանձնելու կապակցությամբ՝ ողջունել է Հայաստանի որոշումը՝ ԵԽ նախագահության ընթացքում կենտրոնանալ այնպիսի առաջնահերթությունների վրա, որոնք նաեւ ԵԱՀԿ օրակարգում են: Ըստ այդմ, կարեւորվել է, որ Հայաստանի առաջնահերթությունների թվում են եվրոպական արժեքների առաջմղումը, Եվրոպայում ռասիզմի ու այլատյացության դեմ պայքարը եւ այդ թեմայով բարձր մակարդակի համաժողովի կազմակերպումը:

**Վ. Պ.**

# Միայն թե Լիցկայի փոխարեն մի նոր Լիցկա...

*1-ին էջից*

Թե չէ տարբեր խումբ խնդիրների չլուծումը բերում է տարբեր մետամորֆոզների եւ մեզ զրկում հեռանկարից: Օրինակ՝ իշխանությունում երկար լռված ավտորիտարներից չազատվելը բերում է այնպիսի իրավիճակի, ինչը Գորիսում տեղի ունեցավ՝ ապագայի հանդեպ անվստահություն ու հուսալքություն սերմանելով: Է, այդ կարգի դեպքեր պիտի լինե՞ն, մահեր տեղի ունենան, արյուն լինի, ցավն արմատին հասնի՞, որ ի վերջո տարիներով մատնացույց արվող այս կամ այն խնդիրը լուծվի: Անկախ դատական գործընթացից՝ Սյունիքում վաղուց պետք էր այլ՝ նոր մտածողությամբ, երկրի ռազմավարական այս տարածքի բարելավումը մարդկանց կյանքի բարելավման հետ կապող, նրանց վստահությունը վայելող, հարգված մարդ, որից ոչ թե վախենան, այլ հարգեն, խորհրդակցեն, նրանից լայն շերտերի եւ ոչ թե մի քանիսի կյանքի բարելավման հույս կապեն: Միգուցե հենց վաղուց պետք էր սկսել Սյունիքից, դեռ Գյումրիից առաջ, կամք գտնել մարզերից սկսելու մեր կյանքը փոխել, արտագաղթը կասեցնել: Միգուցե հիմա էլ դեռ ուշ չէ կամք դրսեւորելը՝ Սյունիքի գլխին ոչ թե մի նոր Լիցկա կապելու, այլ բանիմաց, ապակլանային, սյունեցիների լայն շերտերի շահերը ներկայացնող ձեռնհասի գործուղելու Սյունիք՝ բարելավելու մեր հարավային դարպասի ու նրա մարդկանց, այդպիսով՝ նաեւ Հայաստանի մի հատվածի կյանքը: Գուցե միամտություն է այդպիսի հույսեր ունենալը, մանավանդ Բուդաղյան ընտանիքի մեծ ողբերգության ֆոնին: Համենայն դեպս՝ կառավարությունը երեկ, շատերի համար երեւի անսպասելի, Սյունիքի աղմկահարույց մարզպետ Սուրիկ Խաչատրյանին հեռացրեց մարզպետությունից՝ իր դիմումի համաձայն: Դատելով երեկվա մամուլի հրապարակումների տրամադրություններից, ինչպես նաեւ մի շարք այլ գործընթացներից (Սյունիքի մարզպետարանի երեկվա հայտարարությունը՝ միջադեպի միակողմանի նկարագրությամբ, տեղի ունեցածը որպես զինված հարձակումից ինքնապաշտպանություն ներկայացնելու մարզպետի եւ այլոց ճիգերը, նախորդ օրը զինդատախազի ասուլիսը), բացասական մեսիջները շատ էին այդ առումով, այնպես որ հանրությունը չէր սպասում, որ մարզպետին կազատեն: Թե ինչ փոխվեց նախորդ օրը երեկոյան՝ դժվար է հստակ գնահատել, սակայն չի կարելի բացառել, որ, այնուամենայնիվ, իշխանությունը հասարակական կարծիքից վախեցավ եւ հետեւություններ արեց: Ու դա գնահատելի կարելի է համարել՝ չնայած ընդհանուր հոռետեսությանը: Ու ամենեւին էլ այն չէ, որ լրագրողներս արնախում ենք ու մինչեւ Լիցկայի արյունը չխմեցինք (փոխաբերական իմաստով), չհանգստացանք:

Սակայն մարզպետի ազատումը դեռեւս չի նշանակում ընդհանրապես գործի բացարձակ ազատ քննության կամք: Այնուամենայնիվ՝ լոկալ առումով մի շատ փոքրիկ, դրական սպասում կա, որ իշխանությունը հենց սեփական ինքնապահպանման եւ երկրի պահպանման առումով կարող է ստիպված լինել ազատվել լիցկայանման մարդկանցից առհասարակ:

Վերադառնալով մարզպետի ազատմանը՝ հավատացած նշենք, որ այդ ազատումը գրոշ չի արժենա, եթե երկրի առաջին դեմքերը չկարողանան առհասարակ հաղթահարել տեղերում արդեն երկու տասնամյակ ձեւավորված հիերարխիան՝ տնտեսական եւ այլ, եւ նոր մարզպետ նշանակելիս չառաջնորդվեն բոլորովին նոր մոտեցումներով. սոսկ կուսակցական մոտեցումը, տվյալ տնտեսական շահերի միեւնույն շրջանակի պարտադրանքը՝ նույն շահերի մի այլ ներկայացուցչի տեսքով միայն կարող է կրկնել նախորդ վիճակը: Սյունիքում վաղուց հարկավոր է լավ կառավարիչ, ով տեղական կլաններից ոչ մեկին չի ներկայացնում՝ ոչ տեղացի գործարարի շահեր, ոչ էլ այլ մեկի, եւ մտածի մարզը ոտքի կանգնեցնելու, հասարակ սյունեցիների համար հարմարավետ բնակավայր դարձնելու, սյունեցիների՝ սեփական բնակավայրին կառչած մնալու հույսն արթնացնելու մասին:

Գուցե Սյունիքը կարող է դառնալ այն առաջին մարզը, որից փոփոխությունները կփոխանցվեն մյուս մարզեր, ու Հայաստանում իրական դանդաղ, բայց փոփոխություններ կսկսվեն:

Իսկ եթե Լիցկային պիտի փոխարինի մի այլ Լիցկա՝ նրա կողմնակիցներից կամ շրջանակից մեկը, ուրեմն ոչ մի երաշխիք, որ այժմ տեղի ունեցածն ապագայում էլ չի կրկնվի:

Թող այս ցավալի դեպքն առիթ դառնա ազատվելու ոչ միայն անվանարկված մարդկանցից, այլեւ սկիզբ դնի մեր կյանքն իրավամբ փոխելուն: Իսկ վերջնականապես հուսահատվել կամ թեւերը կախ գցել միշտ էլ կարելի է հասցնել:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՍՏԵՌՆ

# Հոլիվուդը հետաքրքրված է Սյունիքի մարզպետարանով

Այն, ինչ երկու օր առաջ հայտնվեց Սյունիքի մարզպետարանի կայքում, ցնցեց հայ հասարակությանը: Հատկապես այն փաստը, որ իրավապահ մարմիններն այնքան խղճուկ էին, որ դիմել էին Սյունիքի մարզպետարանին, որպեսզի նա ներկայացներ, թե ինչ է կատարվել հունիսի 1-ի գիշերը: Դա օրենքի խախտում է, որովհետեւ նախաքննության փուլում որեւէ նյութ չի հրապարակվում: Եթե իրավապահ մարմինների ներկայացուցիչները առգրավել են տեսաձայնագրող բոլոր սարքերը, որտեղի՞ց դրանք հայտնվեցին մարզպետարանի աշխատակազմի մոտ: Սակայն երբ տեսնում ես, որ զինդատախազը հանցագործ մարզպետի փաստաբանն է դարձել, ապա ենթադրելի է, որ մնացած համակարգերում էլ նույն փնթի ու թայֆայական մտածելակերպը պետք է լինի:

Բացի հայ հասարակությունից՝ ցնցված են նաեւ միջազգային կինոարտադրող ընկերությունները: Հատկապես **էքշըն** ժանրի սիրահարներին ուղղակի ցնցել է Սյունիքի մարզպետարանի աշխատակիցների հետեւյալ նկարագրությունը.

«Մեքենայից իջնում է գնդապետ Արտակ Բուդաղյանն ու անմիջապես կրակ բացում: Հավաքվածները դեսուդեն են փախչում: Լոռետա Բարսեղյանը մոտենում է Արտակ Բուդաղյանին եւ բռնում զենքից, փորձում խլել կամ խանգարել կրակելուն: Երեք կրակոց հաջողվում է փոխել: Լոռետա Բարսեղյանը եւ Արտակ Բուդաղյանը շարունակում են իրար քաշքշել, բայց գնդապետին հաջողվում է առաջ շարժվել: Նրան է մոտենում Ավետիքն ու փորձում կանգնեցնել եղբորը: Այդ պահին երկու եղբայրը վայր են ընկնում կողքի ավազաթմբի վրա: Քիչ անց վեր է կենում Ավետիքը, քայլվածքից երեւում է, որ նա արդեն վիրավոր է: Հետեւից նրան է մոտենում եւ թիկունքից բռնում Նիկոլայ Աբրահամյանը եւ Ավետիքի զենքը խլում: Վերջինս մի նոր զենքով է կրակում Նիկոլայի վրա, ով վայր է ընկնում եւ մնում տեղում: Ավետիքը փորձում է առաջ շարժվել դեպի բակի կողմը, բայց դիմացից կրակում են. կրակողները չեն երեւում տեսապատկերում: Հետ է քաշվում, մեկ անգամ եւս կրակում դարպասի ուղղությամբ ու ընկնում գետնին: Մինչ այդ պահը գնդապետը շարունակում էր մնալ ավազաթմբի վրա ընկած: Տեսադաշտում միայն Լոռետա Բարսեղյանն է: Նա մոտենում է գետնին ընկած Ավետիքին եւ ձեռքի շարժումներ անում:

Կրկին տեսադաշտում միայն Լոռետա Բարսեղյանն է: Նա մոտենում է ավազաթմբին ընկած գնդապետին, նախ ոտքով խփում-հրում է կողքին ընկած զենքը, այնուհետեւ ձեռքը մեկնում է Արտակին՝ բարձրացնելու փորձ անում, բայց վայր է ընկնում ավազաթմբի վրա, բարձրանում ու նորից քայլում դեպի Ավետիքը»: Հոլիվուդում խոստովանել են, որ վաղուց նման բարձր եւ վառ երեւակայությամբ սցենար չէին կարդացել-գրել:

Սյունեցիների մտքի վառ երեւակայություն ու **էքշըն** ժանրում նրանց պրոֆեսիոնալ պատկերացումները հատկապես գրավել են Paramount Pictures-ի տնօրենությանը: «**Ազգ**»-ի հումորի եւ սարկազմի բաժնի հավաստի աղբյուրների հաղորդմամբ՝ Paramount Pictures-ում համոզված են, որ հատկապես վերոնշյալ էպիզոդի էկրանավորումը նոր կերպարով կներկայացնի հայ կնոջը: Մասնավորապես, թե ինչպես է կինը փորձում փրկել մինչեւ ականջները կեղտի ու հանցագործության մեջ թաթախված ամուսնուն ու որդուն, որդու եւ թիկնապահների ներկայությամբ վազում ու սկսում կռվել երկու տղամարդու դեմ:

«21 Century Fox»-ից տեղեկացանք, որ իրենց ընդհանուր առմամբ հետաքրքրել են Սյունիքի մարզպետի կերպարն ու վերջին օրերի իր «քաջագործությունները» ու հրաժարականը: Հաշվի առնելով հայաստանյան ներքաղաքական ավանդույթը, «21 Century Fox»-ը նոր թրիլլեր կնկարահանի «Լիսկայի վերադարձը կամ I will be back» վերնագրով: Այս ֆիլմի ռեժիսորները ոգեշնչվել են նաեւ նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի հատկապես վերջին 3 տարվա կենսագրությունից: Ֆիլմն ավարտվում է նրանով, որ հրաժարական ներկայացրած մարզպետը, ով քրեական անցյալ ունի, կարողանում է իր գործերն այնպես դասավորել, որ առաջադրվում է նախագահի թեկնածու եւ լավ շանսեր ունի հաղթելու:

«Universal» ընկերությունն էլ միլիոնավոր դոլարներ է առաջարկել, որպեսզի մարզպետարանի աշխատակիցների ներկայացրած ամբողջական սցենարը վերցնի: Մարզպետարանում մտավախություն են հայտնել, չէ՞ որ սկզբնական գաղափարն այնքան էլ իրենցը չէր, այլ կերպ ասած, իրենց էդ փառքի ճանապարհին կանգնեցրել է, ոչ ավել, ոչ պակաս, զինվորական դատախազը, հետեւաբար նա էլ պետք է մեկնի Հոլիվուդ: Սակայն զինդատախազը, ով արդեն իր բաժին սեւ գործն արել էր, ներկայացել էր որպես փաստաբան ու նաեւ նշմար տվել, որ Լիսկայենք հայտարարեն, որ մարդասպանությունը ինքնապաշտպանություն է, հասկացել է արդեն, որ իրավիճակը սահմաններից դուրս է գալիս. մասնավորապես, նա չէր ենթադրում, որ Սյունիքի մարզպետարանում նման վառ երեւակայությամբ մարդիկ են աշխատում եւ կկարողանան նման մեծ աղմուկ հանել: Արդեն վրա հասած խայտառակությունից խուսափելու համար զինդատախազը հայտարարել է, որ չի ցանկանում հոլիվուդյան վեստեռն ֆիլմերի սցենարիստ լինել, եւ մտահոգիչ է համարել:

Զինդատախազը դեռ շարունակում է պաշտոնավարել, մարզպետը՝ ոչ... մարզպետարանի աշխատակազմն էլ խուճապի մեջ է. նրանք չէին ենթադրում, որ իրենց նման փառք ու ճանաչում վրա կհասնի ու հիմա չգիտեն ինչ անեն. ոչ զինդատախազն է մի բան ասում, ոչ էլ մարզպետը:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# 30 000 ԱՄՆ դոլար՝ Դիլիջանի միջազգային դպրոցում սովորելու համար

Դիլիջանի միջազգային դպրոցը կբացվի 2014թ. սեպտեմբերին: Այնտեղ ուսանելու համար անհրաժեշտ է տարեկան վճարել 30 000 ԱՄՆ դոլար, սակայն ինչպես տեղեկացրեց այս նախագծի հիմնադիր, հայտնի գործարար **Ռուբեն Վարդանյանը**, ընդունակ երիտասարդներին հասանելի կլինի միջազգային կրթություն ստանալ, եթե նույնիսկ նրանց ծնողներն ի վիճակի չեն վճարելու ուսման վարձը՝ կրթաթոշակների ու դրամաշնորհների միջոցով: Դիլիջանի միջազգային դպրոցի աշակերտության միայն 10 տոկոսը կարող է լինել Հայաստանի քաղաքացի, մնացածը՝ արտերկրից:







Ինչպես լրագրողներին հաղորդեց Ռուբեն Վարդանյանը, շինարարության համար առայժմ 20 միլիոն դոլար է ներդրվել, պատրաստվում են ներդնել եւս 150 միլիոն դոլար:

Ըստ Ռ. Վարդանյանի՝ կենտրոնը հավակնում է դառնալ միակը ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ տարածաշրջանում. «Մեր նպատակն է, որ մեր երեխաները հնարավորություն ունենան սովորելու ոչ միայն Թաիլանդում, Անգլիայում, այլեւ Հայաստանում»:

Դիլիջանի միջազգային դպրոցում դասավանդումն իրականացվելու է անգլերեն լեզվով՝ բարձր որակավորում ունեցող արտերկրացի մասնագետների կողմից:

«**Ազգ**»-ի հետ զրույցում Ռ. Վարդանյանն ընդգծեց նաեւ, որ հայ երիտասարդների համար պարտադիր առարկաներ կլինեն հայոց լեզուն ու գրականությունը, հայ ժողովրդի ու հայ մշակույթի պատմությունը, իսկ օտարազգիների համար այդ առարկաները կլինեն ընտրովի:

Այս դպրոցը հնարավորություն է տալիս երիտասարդներին շարունակելու կրթությունը աշխարհի առաջատար համալսարաններում: Ակնկալվում է, որ հոկտեմբերին Դիլիջանի միջազգային դպրոցը կդառնա United World Colleges հանրույթի լիիրավ անդամ, որը թույլ կտա սաներին համախմբել ավելի քան 100 երկրներում, այդ թվում՝ Եվրոպայում: Նախատեսվում է, որ առաջին ուսումնական տարում UWC Dilijan-ը կհյուրընկալի երիտասարդների 30 երկրներից: Ի դեպ, United World Colleges համակարգը ներկայումս ներառում է 12 ուսումնական հաստատություններ ողջ աշխարհում, որոնք ամեն տարի հյուրընկալում են տարբեր ազգության երիտասարդների: Նրանց ընտրությամբ զբաղվում է UWC-ի միջազգային գրասենյակը Լոնդոնում: Այս տարի UWC-ի քոլեջների 100 շրջանավարտներ ստանում են կրթաթոշակ, ինչը նրանց հնարավորություն է տալիս ուսումը շարունակելու ԱՄՆ-ի լավագույն բուհերում:

Դպրոցական համալիրը բացի ուսումնական մասնաշենքից ու կացարաններից, ներառում է նաեւ փակ լողավազան, մարզահրապարակներ, թատրոն եւ բեմական արվեստների կենտրոն, գիտափորձարարական մաս եւ բժշկական կենտրոն: Դպրոցը նախատեսված է 650 աշակերտների եւ 60 ուսուցիչների համար:

Դիլիջանի միջազգային դպրոցի շենքի ճարտարապետը բրիտանացի Թիմ Ֆլինն է, որը վերջին 20 տարիներին կառուցել է ավելի քան 40 դպրոց՝ համաշխարհային բարձրագույն չափանիշների ու տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ինչպես ներկայացվում է, Թիմ Ֆլինը փորձում է Դիլիջանի շինությունների ավանդական ոճին համադրել ժամանակակից ճարտարապետական միտումները. թե ինչ կստացվի, դժվար է ասել, սպասենք վերջնական տեսքին:

Ռուբեն Վարդանյանը նաեւ ցանկանում է ապագայում աշակերտների թիվը կրկնապատկել. «Դիլիջանը բարձր էկոլոգիա ունեցող քաղաք է, որը կհրապուրի արտասահմանցիներին: Միջազային դպրոցի ծրագիրը կունենա 3 մակարդակ՝ նախադպրոցական (13-14 տարեկան), Քեմբրիջի հավաստագրի (14-16 տարեկան), եւ IB Diploma ծրագրի (16-19 տարեկան)»:

Միջազգային դպրոցի ստեղծումը խթանում է նաեւ աշխատատեղերի ստեղծումը, ինչպես այժմ շինարարության, այնպես էլ ուսուցիչների կազմի առումով, եւ ոչ միայն: Ի դեպ, այժմ շինհրապարակում աշխատում է 500 շինարար, որոնցից 100 Դիլիջանից եւ հարակից տարածքներից են:

Tim Flynn Architectors ընկերության ճարտարապետ **Լալա Վարդանյանն** էլ տեղեկացրեց, որ նախագծում հիմնական շեշտադրությունը դրվում է դպրոցաշենքը համահունչ լինի դիլիջանյան կանաչ մթնոլորտին, ինչպես նաեւ չվնասի շրջակա միջավայրը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը երեկ աշխատանքային այց էր կատարել Դիլիջան անձամբ տեսնելու, թե ինչպես են ընթանում դպրոցի շինարարական աշխատանքները:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

*Հ. Գ. Լրագրողների այցը Դիլիջանի միջազգային դպրոց տեւեց ընդամենը 15 րոպե: Արդյոք ճիշտ էր այդքան լրատվամիջոցների տանել Դիլիջան 15 րոպե տեւողության հարցազրույցի համար, երբ դեռեւս դիտարժան շատ բան չկար: Այդ ամենը կարելի էր անել նաեւ Երեւանում:*

***ԸՆԴԴԵՄ ԸՆՏԱՆԻՔԻ ՔԱՅՔԱՅՄԱՆԸ***

# Օրինագծեր, որոնք դեմ են հայկական ընտանիքին

*1-ին էջից*

**Աստվածաբանության պատվավոր դոկտոր, վերապատվելի Սամվել Նավոյանի կարծիքով՝ մեր ունեցած արժեհամակարգի կործանման ճանապարհ է բացվում, ինչը կտանի ընտանիքի նպատակային կործանման: Համահայկական հիմնախնդիրների «Արեգ» գիտավերլուծական կենտրոնի կողմից «Արցախ» ակումբում կազմակերպված քննարկման ժամանակ Սամվել Նավոյանը հավելեց. «Երբ ընտրեցինք անկախության ճանապարհը, չէինք պատկերացնում, որ կանգնելու ենք արժեհամակարգի պահպանման առջեւ»: Իսկ օրինագծերը, որոնք Եվրոպան մեզ պարտադրում է, հետզհետե տանելու են դարերով ձեւավորված ընտանեկան ամողջ համակարգի կործանման, ու ինչպես նշեց դոկտոր Նավոյանը, մարդկային հասարակությունը կրկին գնում է Սոդոմի ու Գոմորի ճանապարհով, որա վկայությունը միասեռականների շքերթներն են, նրանց ամուսնությունները, որոնք Ֆրանսիայում, ԱՄՆ-ի 11 նահանգում արդեն օրինականացվել են:**

**ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դոցենտ Վարդան Խաչատրյանն ասում է, որ կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների մասին օրինագիծը ԱԺ-ում թեեւ ընդունվեց, սակայն պետք է կանխել նախագահի կողմից դրա ստորագրումը: Վարդան Խաչատրյանն ուսումնասիրել է օրինագիծը ու գտնում է՝ եթե սա օրենքի ուժ ստանա, հետեւանքները թերեւս կանխել չլինի: Իսկ մեզանում հասարակության ռեակցիան օրինագծերի հանդեպ պասիվ է, քանի որ մարդիկ մեծ հաշվով իրազեկ չեն, որ դրանք միտված են ընտանիքները քայքայելուն:**

**Եվ վերջում քննարկմանը Վարդան Խաչատրյանը հավելեց, որ միասեռականների թիվը Հայաստանում ավելանալու միտում ունի, սա ցույց է տվել հետազոտությունը, չնայած միասեռականների կոնկրետ թիվ դեռեւս չկա, քանի որ նրանց մեծ մասը միասեռական լինելը թաքցնում է:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ




# Մարդն ու ծառը

Մարդն իր առօրյայի մտքերով տարված այգի մտավ: Այնքան էր մտահոգ, որ սովորական դարձած բարեւն էլ չտվեց. դա զգաց վայրկյաններ անց, երբ ծառի առաջին ճյուղը կտրեց: Դե, ծառ է, կների, արմատները հարազատ միջավայրում են, իր տարիքից էլ հաստատ ավելին ունի, լուսահոգի հորեղբոր տնկածն է:

Այգին հորեղբոր տղան նվիրեց ընտանյոք արտերկիր մեկնելու նախօրեին: Հարազատներից ամենամոտը ինքն էր մնացել, հետն էլ՝ հորեղբորորդիները մեզանում եղբայրներ են համարվում: Ճիշտ է, նա իր կտրուկ եղբոր համադասարանցին է եղել, որը գյուղաբնակ մնացած իրենց հորից ժառանգած տուն, տնամերձ այգի ու վարելահող ունի, հետն էլ առողջական խնդիրներ, դժվար թե գյուղամիջից այսքան հեռու այգում հարկ եղած ուշադրությունը նվիրեր: Թե ինչու հորեղբորորդին վաճառել չփորձեց, անհասկանալի է. իսկ թե ինչու իրեն վստահեց, պարզ է. հորեղբորդ ստեղծածն է, ասաց, նա քեզ շատ էր հավանում:

Էտի մկրատը, որը եղբորը հանդիպելուց հետո նրանից էր վերցրել, արդեն բավական գործ էր արել: Երկրորդ տարին մարդ ու ջուր չտեսած ծառը մասամբ ազատվել էր իրար մեջ հայտնված ճյուղերից, որոնց դասավորությունը տեղ-տեղ բերդպար էր հիշեցնում: Ժպտալու պես մի պատկեր էլ նկատեց, նախորդ տարվա ճյուղերը կարծես վաղորդյան արթնացում էին զգում, արեւի կարոտ էին պարում, ակնթարթ ակնթարթի վրա վերուվար ցատկոտում: Ծառերի միջնահատվածում ճյուղերն առավել խճճված էին, կարծես իրար ներելու նպատակով էին դասավորվել, միմյանց հրմշտելով բնամասից հեռացել: Առավել ստվերոտ տեղերում չորուկներ կային, որոնցից բարակները մատներին ուժ տալով կոտրատեց: Փաթաթուկն էլ իր գործն էր արել, ճյուղերի մի մասը սկսնակ շյուղագործի արածի էր նմանվել: Մկրատով էտելով ու մասներով աշխատելով, որոշ դեպքերում ոտքերի օգնությանը դիմելով՝ ծառի միջնամասում էլ հնարավորինն արեց ու ցած իջավ. վերեւում անելու բան կար, բայց համարձակություն չցուցաբերեց. ճյուղերն այնտեղ մատղաշ են, իր ծանրությանը չեն դիմանա, որոշ ճյուղերի հասնելու համար ձգվել է պետք, ձեռքն ու մկրատը կարող են եւ չհասնել, վտանգավոր է: Տղան, ճիշտ է, օրեր անց գալու դեպքում խոստացավ միանալ իրեն, բայց նա էլ իր ընտանիքի հոգսերն ունի, հարկ չհամարեց նեղություն տալ: Այգուց, ճիշտ է, շատից-քչից օգտվում են, բայց եւ ծախսեր են անում:

Էտելու ենթակա հաջորդ ծառը այգու միջնամասում էր: «Բարեւ» ասաց, փորձեմ քեզ էլ ավելորդություններից ազատել» խոսքեր շշնջաց, որից անմիջապես հետո ճկված ու լարված ճյուղերից մեկը ապտակի պես հարվածեց դեմքին: Պարզ է, որ այն կտրել էր պետք, բայց ճյուղի ոչ երկարությունն էր մի կարգին նշմարվում, ոչ աճած տեղը: Ստիպված իրեն էլ ոչ տեսանելի մի տեղից կտրեց, ճյուղը ճռռոցով ընկավ՝ թեթեւակի վնասելով մի քանի այլ ճյուղերի: Լավ չստացվեց, սակայն ինչ կարող էր անել: Կարողացավ ծառի միջնամասից մացառների պես աճած որոշ ճյուղեր էլ հեռացնել, որոնք կտրվելուց հետո շատ արագ էին իրենց նախկին դիրքերին վերադառնում, ակնարկում զգացած ցավի մասին: Այսուհանդերձ էտել պետք էր, այս գործում փորձառու եղբայրն էլ էր խորհուրդներ տվել: Հատկապես հարկ էր խորքերում, նորաճյուղերի հայտնվելուն խոչընդոտող հատվածներում նոսրացումներ կատարել, դեռ բաց կանաչ բողբոջներին արեւի լույսով հագենալու հնարավորություն ստեղծել: Այստեղ չգիտես որտեղից գոյացած չորուկներ ու անհասկանալի կոճղուկներ կային, որոնց «Այգու խնամքը» ուղեցույցում չէր հանդիպել: Գտավ, որ ճիշտ են ակնարկում, թե մերն ուրիշ է, քանզի հարեւանից վերցրած ուղեցույցը թարգմանություն էր, թեեւ իրականացնողը հայտնի բնապահպան էր եւ նախաբանում էլ նշել էր, որ առաջարկները կիրառելի են նաեւ մեր պայմաններում:

Չորուկներն ու կոճղուկները էտի մկրատով չես հեռացնի: Մի քանի օրից, մտածեց մարդը, հարկ կլինի սղոցով ու կացնով այգի գալ: Տանը թե մեկն ունի, թե մյուսը, այնպես որ ծառերն ու այգին տեսքի կբերի:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Ի պաշտպանություն Հայ առաքելական եկեղեցու

Այս վերլուծականը գրելու առիթը ԱՄՆ պետական դեպարտամենտի «Կրոնական կազմակերպությունների մասին միջազգային զեկույց 2012»-ն է, որը հրապարակվեց այս տարվա մայիսի 20-ին: Զեկույցը մանրամասնորեն վերլուծել է կրոնական կազմակերպությունների գործունեությունը Հայաստանում եւ կրոնական ազատությունների վիճակը արեւմտյան ժողովրդավարության եւ միջազգային իրավական նորմերի լույսի ներքո: Այս հոդվածի շարժառիթը վերոհիշյալ զեկույցում պարունակված դատողություններն են այն մասին, որ «Հայաստանի օրենքը որոշակի արտոնություններ է շնորհում Հայաստանյայց առաքելական եկեղեցուն, որոնք չեն գործում մյուս կրոնական խմբերի համար», ինչպես նաեւ դրանից բխող դատողությունները մեր հասարակությունում անհանդուրժողականության եւ «ատելության դրսեւորումների մասին»: Զեկույցի ամփոփիչ մասում, խոսելով ԱՄՆ կառավարության քաղաքականության մասին, ասվում է, որ ԱՄՆ դեսպանը, դեսպանության ներկայացուցիչներն ու այցելող պաշտոնյաները «հրապարակավ եւ պետական պաշտոնյաների հետ հանդիպման ընթացքում խրախուսել են կրոնական ազատությունը եւ միջդավանական երկխոսությունը»: Բացի դրանից՝ «նրանք աշխատել են կրոնական եւ քաղաքացիական հասարակության առաջնորդների հետ կրոնական հանդուրժողականությունը խթանելու ուղղությամբ»:

Հասարակության համար դավանանքին եւ հավատքին առնչվող հարցերը ամենազգայուններն են, որովհետեւ սերտորեն առնչվում են յուրաքանչյուրի բարոյական պատկերացումներին եւ աշխարհահայացքին: Այլ կերպ ասած, այն ամենին, ինչը մարդուն մարդ է պահում տարաբնույթ ու խայտաբղետ մարդկային օվկիանոսում: Այս վերլուծականի առիթը նաեւ վերջին շրջանում այն բազմաթիվ տեղեկություններն են, որոնք հեռուստատեսությամբ, ռադիոյով, ինտերնետով եւ բերնեբերան լցվում են հայաստանցիներիս տները, դառնում ընտանիքներում քննարկման առարկա:

### Հանդուրժողականությունը որպես դիմադրողականության նշան

Բոլորս գիտենք, որ քրիստոնեության առաջին տարածողները Հայաստանում եղել են Բարդուղիմեոս եւ Թադեոս առաքյալները եւ նրանց հետեւորդները: Բոլորս գիտենք, որ քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունվել է 301 թ., եւ անվիճելիորեն Հայաստանն է աշխարհի առաջին քրիստոնյա պետությունը, որտեղ քրիստոնեական հավատքը պահպանվել է իր վաղնջական տեսքով, օրգանապես միահյուսվելով հայկական ազգային հնագույն հավատալիքների, ծեսերի եւ ավանդույթների հետ: Հենց այս ֆենոմենը հայ քրիստոնյայի կերպարը դարձրել է բացառիկ հետաքրքրական շատ երկրների մտավորականների, ուսումնասիրողների, գրողների համար, որովհետեւ չնայած պետականության հազարամյա կորստին, մեր հավատքի հենասյուները մնացել են հաստատուն եւ անաղարտ: Սա զարմանալի է, բայց հենց այդպես է:

Հայ առաքելական եկեղեցին պատվով բռնել է ամենադաժան փորձությունը, երբ 20-րդ դ. 70 տարի քարոզվել է ոչ թե աշխարհիկ, այլ աթեիստական գաղափարախոսություն: Խորհրդահայ իրականության մեջ ամենատարբեր պատճառներով, դիմադրելով տեռորին, սպանություններին, աքսորներին, Հայ առաքելական եկեղեցին Հայաստանի անկախությունը դիմավորեց զարմանալիորեն հասուն, լավ կազմակերպված եւ գիտակցելով իր առաքելությունը անկախ պետականության շինարարությանը մասնակցելու հարցում: Ճիշտ է, որ մեր հետխորհրդային հասարակությունը Սահմանադրության համաձայն աշխարհիկ է եւ պետությունը բաժանված է եկեղեցուց: Եվ այս առումով մենք ճիշտ այնպիսի հասարակություն ենք, ինչպես որեւէ այլ միջինեվրոպական պետության մեջ ապրող հասարակություն: Բայց Հայ առաքելական եկեղեցու բացառիկ դերը մեր հասարակության մեջ ոչ ճնշմամբ է ընդունվել, ոչ էլ բռնությամբ պարտադրվել: Խորհրդային տարիներին մեր եկեղեցին Սփյուռքում էր իրականացնում բացառիկ ազգանպաստ գործունեություն հայկական մյուս, նրա համեմատությամբ ավելի համեստ դերակատարություն ունեցող հաստատությունների եւ կազմակերպությունների հետ միասին Մեծ եղեռնից փրկված հայությունը փորձելով փրկել ուծացումից եւ բարոյալքումից: Հենց այս ծառայությունն է, որ Հայաստանի պայմաններում 90-ականների սկզբին բացարձակապես անվիճելի դարձրեց նրան զուտ բարոյական նախապատվություն շնորհելը մեր բազմակրոն հասարակության մեջ:

Հայ առաքելական եկեղեցու միանգամայն հասկանալի առաջատարությունը հայկական սփյուռքում շատ վաղուց պաշտոնապես ընդունել են թե՛ հայ կաթողիկե, թե՛ հայ ավետարանական եկեղեցիները: Դրա վկայությունն է բոլոր տեսակի ազգային ձեռնարկների ժամանակ հայկական սփյուռքի հիմնական եկեղեցիների միասնական հանդես գալը, օրինակ՝ ապրիլ-24-յան կամ Հայաստանի անկախությանը նվիրված միջոցառումներում, ինչպես եւ այլ շատ դեպքերում: Այնպես որ, հայության, մասնավորապես սփյուռքահայության ներքին կյանքի մասին ամփոփ տեղեկություններ ունեցողները միշտ էլ կհաստատեն, որ երկրորդական նկատված վիճաբանությունների, տարաձայնությունների ֆոնի վրա գլխավոր, առաջնային նկատված հարցերում Հայ առաքելական եկեղեցին միշտ եղել է բացառիկ հանդուրժող, դրանով էլ պահպանելով հայ հոգեւոր կյանքի առաջնորդի իր իրավունքը այն պայմաններում, երբ դա որեւէ կերպ որեւէ պետության կողմից առանձնապես չի խրախուսվել: Անկախության հաստատումից 22 տարի անց ասել, որ հայաստանցիներս 90%-ով հայ-առաքելական քրիստոնյա ենք, բավական պայմանական, բայց սկզբունքորեն ճիշտ դատողություն է:

Խորհրդային Միության փլատակների վրա ձեւավորված նորանկախ բոլոր պետություններում կրոնական կյանքի զարգացում եւ աշխուժացում արձանագրվեց: Թե՛ գերակշռող քրիստոնյա, եւ թե՛ գերակշռող մահմեդական երկրներում մարդիկ փարվեցին հավատքին՝ այդտեղ փնտրելով օգնություն վերահաս դժվարությունների, անարդարությունների, դաժանության եւ բազմաթիվ այլ վտանգների դեմ: Հենց դրա համար էլ հետխորհրդային բոլոր երկրներում կրոնական կազմակերպությունները զարգացում եւ ծաղկում սկսեցին ապրել եւ Արեւմուտքի կողմից դա ընկալվեց որպես անկախ պետականության շինարարությանը ուղեկցող զուգահեռ գործընթաց:

Ասել, որ ամենահարգված ավագի դերում Հայաստանյայց առաքելական եկեղեցին հանդուրժող չէ՝ ուղղակի մեղք է ճշմարտության դեմ: Հայաստանի բնակչության 95%-ը ազգությամբ հայեր են: Դպրոցներում ուսումնասիրելով Հայ առաքելական եկեղեցու պատմությունը, մեր երեխաները ընդամենը ուսումնասիրում են մեր պատմության հենց այն մասը, որտեղ պետության բացակայության պայմաններում Հայ առաքելական եկեղեցին կատարել է ազգի համախմբման իր շատ դժվարին առաքելությունը:

### Բազմակրոն հասարակություններն աշխարհում՝ դժվարությունների առջեւ

Վերջերս ռուսաստանյան հեռուստաալիքով ներկայացնում էին միջկրոնական հարցերի վիճակը Ֆրանսիայում: Փարիզյան կաթողիկե եկեղեցիներից մեկի հովիվը տեսախցիկի առաջ սպառնում էր դատի տալ մի լրագրողի, որը գրել էր, թե կիրակնօրյա պատարագի ժամանակ եկեղեցում տասներկու հավատացյալ է եղել: «Եկեղեցում շատ ավելի շատ մարդ կար, ավելի ճիշտ՝ 30 հոգի»,- բողոքում էր հոգեւոր հովիվը: Նույն ժամանակ եկեղեցու հարեւան փողոցում նամազի ժամին մզկիթում տեղ չլինելու պատճառով փողոցում աղոթում էին մի քանի հազար մահմեդականներ: Եվրոպայի բոլոր քրիստոնեական եկեղեցիների հետեւորդները միասին վերցրած այս էլ որերորդ անգամ պարտվում են Եվրոպայի խորհրդի քվեարկություններում, երբ խոսքը վերաբերում է միասեռականների իրավունքներին: Այն օրը, երբ Հռոմի նախկին Բենեդիկտոս XVI պապը հայտարարեց, որ այլեւս անկարող է պաշտոնավարել եւ հեռացավ իր մենաստանը, Լոս Անջելեսցի մի հայտնի ֆուտուրոլոգ, մեկնաբանելով Հին Կտակարանի մարգարեությունը, հայտարարեց, որ կաթոլիկ Արեւմուտքը աննախադեպ արժեքային ճգնաժամի առջեւ է կանգնած, եւ նույնիսկ պնդեց, որ Հռոմի հաջորդ պապը Վատիկանի վերջին առաջնորդն է լինելու: Այս տեղեկությունները հաղորդող լրատվամիջոցները օբյեկտիվության դրսեւորում համարվող սառը անտարբերությամբ արձանագրեցին, որ Եվրոպայում բազմակրոն եւ բազմամշակութային հասարակության ձեւավորման գործում լուրջ անհաջողություններ կան, եթե չասենք՝ ուղղակի ձախողումներ:

Օրթոդոքս քրիստոնյա աշխարհը, որտեղ ռուս ուղղափառ եկեղեցին ամենամեծն է եւ ամենաազդեցիկը, արդեն ուշքի եկած եւ վեր հառնած խորհրդային աթեիզմի դեմ պայքարից, փորձում է առաջնորդել իր հավատացյալներին ընտանիքի ամրության եւ ավանդական մյուս արժեքների քարոզման միջոցով: Արեւմտյան քրիստոնեության ճգնաժամի համապատկերում արեւելյան քրիստոնեության աճող ակտիվությունը հույս է ներշնչում, որ Եվրոպայում ու Ամերիկայում այլ կերպ լուծվող, ավանդական բարոյականությանը վերաբերող տարբեր հարցեր կարող են այլ, ոչ եվրոպական եւ ոչ էլ ամերիկյան լուծումներ ստանալ: Բայց դեռ առանձնապես պարզ չէ, թե դա ինչպես է արվելու, եւ արեւելյան ուղղափառությունը ինչպես է հաղթահարելու ժամանակակից գլոբալ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամին զուգահեռ ընթացող բարոյական հոգեւոր ճգնաժամի ակնհայտ հետեւանքները:

### Ուսանելի հանդուրժողականության օրինակներ

Բազմամշակութային հասարակություններում շատ դժվար է համախմբել որոշակի գաղափարների եւ բարոյական արժեքների կողմնակիցներին: Եվ դրա համար լուրջ աշխատանք եւ զգալի միջոցներ է պետք ծախսել: Այդ մասին ինձ պատմում էին անցյալ տարի սեպտեմբերին Փարիզում մի կարճատեւ ուսումնառության նպատակով հավաքված կաթոլիկ, բողոքական եւ ուղղափառ եկեղեցիների աշխարհիկ հետեւորդները: 600 մլն-անոց Եվրոպայում մի քանի հարյուր մարդու մի բարեգործական գաղափարի շուրջը հավաքելը լուրջ հաջողություն է դիտվում, եւ դրա համար կարելի էր եվրոպական հանձնաժողովի կողմից էական դրամաշնորհներ ստանալ: Բարեսիրական ծրագրերի ճնշող մեծամասնությունը մեր իրականության մեջ կատարվում է ժողովրդական հանգանակությունների միջոցներով եւ մեր բարերարների ծախսով: Մեր համեստ նյութական հնարավորություններ ունեցող հասարակությունը (միջազգային համապատասխան ռեյտինգներով) փորձում է իր հնարավորություններով դիմակայել անօրենության, ամենաթողության, դաժանության մերօրյա մարտահրավերներին: Ես բոլորովին չեմ ուզում քարոզել միջկրոնական ատելություն կամ անհանդուրժողականություն: Բայց ուզում եմ, որ, օրինակ, ամերիկյան զեկույցի հեղինակները մտնեն այն զինվորների ու նրանց ծնողների դրության մեջ, ովքեր կանգնած են ռազմաճակատի առաջատար գծում: Եվ նրանց բացատրեն, որ ուրիշը դա կարող է եւ չանել, որովհետեւ ունի այլ կրոնական համոզմունքներ: Աշխարհը չի եղել երբեք միատեսակ եւ ստերիլ եւ այդպիսին երբեք չի լինելու: Իրականում, աշխարհը միշտ էլ բազմազան է եղել եւ նույնիսկ արեւմտյան ինկվիզիցիաների ժամանակներում եղել են այլախոհներ եւ գաղտնի այլադավաններ: Հայ ավետարանական եկեղեցու վերապատվելիներից մեկն ինձ պատմում էր, որ պետք է հասկանալ, որ հայ բողոքականությունը ծագել է ոչ թե Եվրոպայից կամ ԱՄՆ-ից, այլ, որպես բողոք եւ այլընտրանք, հայ եկեղեցու ներսում: Այս իրողության գիտակցությամբ է նաեւ, որ մեր փոքրիկ երկրում բոլոր ուղղությունների քրիստոնյաները աշխարհիկ, ժողովրդավարական հասարակարգի նոր պայմաններում ուղղակի դատապարտված են երկխոսելու եւ համագործակցելու:

Որպեսզի համեմատենք բազմակրոն հասարակության իրական դրսեւորումները մեզանում եւ Եվրոպայում, բավական է մի օր շրջել եվրոպական մեծ քաղաքների կենտրոնական փողոցներում երեկոյան ժամերին: Եվ նույնը հետո անել երեւանյան փողոցներում: Հարցրե՛ք Եվրոպայում ապրող ձեր ծանոթներին, Եվրոպա գնացող զբոսաշրջիկներին եւ հատկապես Կալիֆոռնիայում եղածներին, թե ի՞նչ դժվարությունների եւ վտանգների են նրանք դիմակայում բազմազգ ու բազմակրոն հասարակություններում: Ի՞նչ կապ ունի այստեղ կրոնը, կհարցնեք դուք: Բա էլ ո՞վ է հոգալու բարոյականության եւ աշխարհայացքի մասին, կպատասխանեմ ես:

Մեր նկատված թերություններից ամենամեծն այն է, որ խորհրդային ժամանակների դեռեւս չհաղթահարված ուժով մենք մեր երեխաներին չենք սովորեցնում կարդալ եւ ուսումնասիրել Աստվածաշունչ: Որեւէ ակադեմիական միջավայրում հեշտությամբ կարելի է զանազանել Աստվածաշունչ կարդացածին չկարդացածից: Նույն արեւմտյան կրթական համակարգում, չնայած Եվրոպայում հրաժարվեցին քրիստոնեությունը մշակութային խարիսխներից մեկը համարել, Աստվածաշնչի եւ աստվածաշնչյան թեմաների իմացությունը կրթվածության եւ դաստիարակվածության անվիճելի ապացույցներից մեկն է հենց թեկուզ այն պատճառով, որ համաշխարհային գրականության, արվեստի, փիլիսոփայության մի ահռելի հատվածը հագեցած է աստվածաշնչյան մոտիվներով եւ քրիստոնեական մշակույթի մի մասն է:

Խորհրդային Միության անկումից 22 տարի անց մենք արձանագրում ենք, որ մեր հասարակության մեջ քիչ են կարդում Աստվածաշունչ: Եվ քանի որ այս եւ մեր բարոյական դաստիարակությանն առնչվող այլ հարցեր ուրիշ ոչ մեկը, բացի Հայաստանյայց առաքելական եկեղեցուց, մեզանում ուղղակի չի կարող լուծել, մենք պետք է շարունակենք ազգովին սատարել եւ պետականորեն հովանավորել Հայ առաքելական եկեղեցուն, ինչպես որ անում ենք, որը մյուս եկեղեցիների հետ երկխոսությամբ շարունակելու է կատարել իր պատմական առաքելությունը մեր բարդ ժամանակներում:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Ի՞նչ «կտա» Բրյուսելը Ալիեւին

Ադրբեջանում Եվրոմիության ներկայացուցչության ղեկավար Ռոլան Կոբիան «Կասպյան նավթը եւ գազը» թեմայով միջազգային 20-րդ խորհրդաժողովում, որը տեղի է ունեցել Բաքվում հունիսի 5-6-ին, հայտարարել է, որ Եվրոհանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոյի «հրավերով հունիսի 3-րդ տասնօրյակին Բրյուսել կայցելի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը» (տես՝ http://haqqin.az/comics/6362): Ըստ ԵՄ հանձնակատարի, «այդ հանդիպումը կողմերին առաջ կմղի հարավային գազային միջանցքի հարցում, ըստ ունեցած տեղեկությունների, որոշում ընդունելու գործընթաց սկսվել է, եւ 2019-ի տարեսկզբին մենք (ԵՄ-ն- Վ. Ա.) կստանանք առաջին գազը» (նույն տեղում):

Ռոլան Կոբիան նաեւ տեղեկացրել է, որ մոտակա շաբաթների ընթացքում պարզ կդառնա ադրբեջանական գազի տարանցման երթուղին, իսկ այս տարվա հոկտեմբերին «վերջնականապես կորոշվի հարավային գազային միջանցքի ներդրումների հարցը»: ԵՄ հանձնակատարի սույն հայտարարության առթիվ «Թուրան» գործակալության վերլուծական բաժինը ենթադրել է, որ «պաշտոնական Բաքուն ամենայն հավանականությամբ «Շահ-Դենիզ» կոնսորցիումի կողմից ադրբեջանական գազի դեպի Եվրոպա տարանցման երթուղի ընտրելու մասին հանդիսավոր պայմաններում կհայտարարի հենց Բրյուսելում»:

Ասվածից պետք է հասկանալ, որ հունիսի 3-րդ տասնօրյակին Իլհամ Ալիեւը Բրյուսել է ուղեւորվելու, որպեսզի Եվրոհանձնաժողովի նախագահի հետ բանակցությունների ավարտին պաշտոնապես հայտարարի դեպի Եվրոպա ադրբեջանական գազի տարանցման երթուղու վերջնական ընտրության մասին: Ավելի վաղ Բաքվում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մորնինգսթարը հույս էր հայտնել, որ Ադրբեջանը երթուղու ընտրության հարցը կլուծի Եվրոմիության հետ համագործակցությամբ, ինչի համար «Միացյալ Նահանգները չափազանց ուրախ կլինեն»:

Եվրոմիության հանձնակատարը չի շրջանցել նաեւ հավանական բարդությունների հարցը: Ճիշտ է, այդ մասին նա խոսել է դիվանագիտորեն չափակշռված ձեւակերպումներով, սակայն նույնիսկ այդ համատեքստում է հասկանալի, որ միայն ադրբեջանական գազի տարանցումը չի բավարարում ԵՄ հավակնությունները: Մասնավորապես, Ռոլան Կոբիան դիտել է տվել, որ Եվրոմիությունն ակնկալում է, որ «Հարավային գազային միջանցք» նախագիծը «կլինի բազմափուլային, եւ այդ խողովակաշարով (ԵՄ երկրներ) մուտք կգործի նաեւ թուրքմենական եւ հյուսիսիրանական գազը» (նույն տեղում):

Մեկ անգամ չէ, որ միջազգային վերլուծաբանները նկատել են տվել Ադրբեջանի կողմից զուտ տնտեսական նշանակության ծրագրերի քաղաքականացման միտումը: Դա իրոք այդպես է եւ վկայվում է նաեւ վրացադրբեջանական հարաբերությունների վերջին բացասական միտումներով: Կասկածից դուրս է, որ պաշտոնական Բաքուն, ձգտելով գազի եվրոպական շուկայում դառնալ Ռուսաստանի մրցակիցը, տնտեսականից զատ հետապնդում է նաեւ աշխարհաքաղաքական շահեր:

Այս իմաստով հատկապես կարեւորվելու է Ալիեւ-Բարոզո բանակցությունների քաղաքական բաղադրիչը: Իլհամ Ալիեւն ակնհայտորեն ձգտելու է, որ Եվրոմիությունը Լեռնային Ղարաբաղի հարցում «հստակ դիրքորոշում արտահայտի» այն դեպքում, երբ Ադրբեջանը ԵՄ Արեւելյան գործընկերության ծրագրով ստանձնած որեւէ պարտավորություն չի կատարել եւ փաստացի հրաժարվում է գնալ քաղաքական համակարգի բարեփոխումների:

Նման իրավիճակում ի՞նչ «կտա» Բրյուսելն Իլհամ Ալիեւին: Ըստ երեւույթին՝ առարկայորեն ոչինչ: Եվրոմիությունն ունի իր խնդիրները, Ադրբեջանում իշխող վարչախումբը՝ սեփական շահը: Այդուհանդերձ, պաշտոնական Բաքվի հավակնությունները կարծես սկսում են անցնել Ադրբեջանի նման երկրի համար թույլատրելի բոլոր սահմանները: Իսկ այդպիսի դեպքերում «պատիժը» չի ուշանում: Լինի դա «արաբական գարնան», թե «Թաքսիմի հրապարակի» տեսքով: Թուրք ցուցարարները, ի դեպ, Անկարայում երեկ կրկին պարզել են «Ալիեւ, հերթը քոնն է» բովանդակությամբ ցուցապաստառ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Միջազգային աջակցությունը քաջալերում է թուրք ցուցարարներին

1-ին էջից

Մինչդեռ ցույցերն սկսվել էին զբոսայգու ծառերի հատումը կասեցնելու նպատակով: Այլ կերպ, Թաքսիմ հրապարակում Աթաթուրքի անվան պալատի պահպանումը, որ երկխոսության համար ցուցարարները որպես գլխավոր նախապայման կառավարությանն են առաջադրում, չի կարող որեւէ առնչություն ունենալ զբոսայգու ծառերի հատման, ծառերն էլ, իհարկե, Թուրքիայի 67 քաղաքներում ցույցերի տարածման, առավել եւս Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության քաղաքային վարչությունները հարձակման թիրախ դարձնելու հետ:

Եթե խնդիրը ծառերը լինեին, ապա ցույցերը չէին անցնի «Բոլորս Աթաթուրքի զինվորներն ենք» կարգախոսով, ցուցարարները Թուրքիայի դրոշի հետ չէին բարձրացնի նաեւ Աթաթուրքի ցուցապաստառները, «Էրգենեքոնի» գործով կալանված զինվորական եւ քաղաքական գործիչների գովեստով զբաղվող հեռուստաալիքներն ու Ժողովրդա-հանրապետական կուսակցությանը հարող թերթերը «Էրդողանի բռնատիրությանը» եւ «կառավարության ֆաշիզմին» դիմադրելու համար չէին փառաբանի ցուցարարներին, ոչ էլ այս կուսակցության պատգամավորներն իրենց ներկայությամբ կխրախուսեին անկարգություններով ուղեկցվող ցույցերը:

Հատկանշական է, որ ցուցարարների հանդեպ ոստիկանության գործադրած անհամաչափ ուժի համար Էրդողանի կառավարությանը դատապարտող հաճախակի հայտարարություններով ցույցերը խրախուսում են նաեւ Սպիտակ տունը, ԱՄՆ պետքարտուղարությունը, ԵՄ-ը, միջազգային կառույցները, արվեստի աշխարհահռչակ երգիչ-երգչուհիները, դերասանները, հատկապես աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները:

Այս լրատվամիջոցներից թերեւս պետք է առանձնացնել անգլիական «Ֆայնենշլ թայմսին», որի առաջնորդողի հեղինակ Դենի Ռոդրիքը՝ լինելով Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, միաժամանակ Թուրքիայում «Էրգենեքոնի» գործով կալանված բանակի պաշտոնաթող գեներալ Չեթին Դողանի փեսան է՝ դստեր ամուսինը: Եթե Ռոդրիքը հրեական ծագումով ամերիկացի է, ապա դժվար չէ ենթադրել, որ թուրք գեներալ Դողանն էլ պետք է սամաթիական, այսինքն՝ առերեւույթ իսլամ ընդունած սալոնիկյան ծագումով հրեա լինի:

Համենայն դեպս վարչապետ Էրդողանը Թաքսիմի «Գեզի» այգու ցույցերի շրջանակում ցուցարարներին «թափթփուկ» անվանելուց զատ, 18-րդ դարի «Սելիմիե» զորանոցը 1938-ին պետականորեն քանդելու առնչությամբ, նկատի ունենալով Մուստաֆա Քեմալ Աթաթուրքին ու Իսմեթ Ինյոնյուին, նշեց. «Մի՞թե կարող էր այլ բան անել երկու հարբեցողի ստեղծած պետությունը»:

Ավելին, նա ցույցերը ղեկավարելու մեջ մեղադրեց Ժողովրդա-հանրապետական կուսակցությանը, միաժամանակ ասաց, որ խառն է նաեւ դրսի ուժերի մասը ու շարունակեց. «Մենք այս երկրում վերջ ենք տալիս իրեն հասարակության սերուցքը համարող խավի արտոնություններին»:

Ժողովրդա-հանրապետականը ոչ միայն Աթաթուրքի ստեղծած կուսակցությունն է, հետեւաբար քեմալականության ջահակիրը, այլեւ նրա շարքերը մեծապես համալրված են այս սերուցքի ներկայացուցիչներով, որոնք իրենց անվանում են «սպիտակ թուրք», իսկ թուրք իսլամականներին՝ «սաբաթայական»:

Այսինքն թուրքական հասարակության «սերուցքը» մշտապես սատարել է Աթաթուրքի ժողովրդա-հանրապետական կուսակցությանը, այս կուսակցությունն էլ՝ բանակին, որ վերջինի հովանավորությամբ ի վիճակի լինի բյուրոկրատների միջոցով հետնաբեմից մշտապես կառավարել երկիրը: Ահա թե ինչու Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը զորակցում է առանց այդ էլ միջազգային աջակցություն վայելող ցուցարարներին, որոնք Թաքսիմի «Գեզի» այգու ծառերը մի կողմ թողած, պատար են կանգնում մի ժամանակ երկրում գործադիր եւ օրենսդիր իշխանություններին վերահսկող թուրքական բանակի այն բարձրաստիճան սպաներին, որոնք կալանված են «Էրգենեքոնի» գործով:



# Երկու Կորեաները կբանակցեն կառավարական մակարդակով




**ԿԺԴՀ-ն եւ Հարավային Կորեան համաձայնել են երկկողմ հարաբերությունների կարգավորման բանակցություններ սկսել կառավարական մակարդակով, հաղորդում է հարավկորեական Ռենհապ գործակալությունը: Բանակցելու նոր առաջարկությունը հունիսի 6-ին ստացվել է Կորեայի խաղաղ վերամիավորման հյուսիսկորեական կոմիտեից: ԿԺԴՀ իշխանությունները որպես քննարկման գլխավոր թեմաներ առանձնացրել են Կեսոնի արդյունաբերական համալիրի աշխատանքի եւ հյուսիսկորեական լեռնային զբոսաշրջության վերսկսումը: Փենյանը Սեուլին իրավունք է ընձեռել նշանակելու բանակցությունների օրը եւ վայրը:**

**Վերամիավորման հարավկորեական նախարարությունը բանակցություններ սկսելու պատրաստակամություն է հայտնել եւ ակնկալում է թերակղզու իրադրության կարգավորում: Այդուհանդերձ Սեուլը դեռ չի որոշել, թե բանակցություններում քննարկման որ թեմաներն են առաջնային եւ երբ պետք է անցկացվի առաջին միջկառավարական հանդիպումը:**

**Ինչպես նշում է Ռենհապը, տվյալ դեպքում Փենյանը դիմել է զիջումների, քանի որ ավելի վաղ Սեուլը համաձայնել էր բանակցել միայն կառավարությունների մակարդակով: Վերջին հայտարարության մեջ ԿԺԴՀ-ն խոստանում է, որ բանակցությունների ծավալման դեպքում կվերականգնի ավելի վաղ իր անջատած Կարմիր խաչի կապի գիծը եւ հավանություն կտա 1950-1953 թթ. Կորեական պատերազմից հետո սահմանի տարբեր կողմերում հայտնված ընտանիքների վերամիավորմանը:**

**Բացի դրանից, ԿԺԴՀ-ն մտադիր է համատեղ միջոցառումներով նշել 1972 թ. հուլիսի 4-ի համաձայնագրի ստորագրման 41-րդ տարեդարձը. այդ փաստաթուղթը սահմանում է երկու երկրների վերամիավորման հիմնական սկզբունքները:**

**Այսպիսով, ԿԺԴՀ իշխանությունները որոշել են հարթել 2012-ի վերջերին ծագած հակամարտությունը: Երկկողմ հարաբերությունների լարվածությունը 2012-ի վերջերին հյուսիսկորեական արբանյակի, հրթիռների արձակման եւ միջուկային փորձարկումների հետեւանք էր:**

# Օբամայի ազգային անվտանգության գծով նոր օգնականը Սյուզան Ռայսն է



**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման որոշել է ազգային անվտանգության գծով իր օգնականի պաշտոնում նշանակել Սյուզան Ռայսին, որը ներկայումս ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչն է:**

**Օգնականի պաշտոնում Ռայսը կփոխարինի Թոմաս Դոնիլոնին, որը թողնում է պետական ծառայությունը:**

**Սպիտակ տան վարդանոցում ելույթ ունենալով՝ Օբաման նաեւ հայտնել է, որ ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչի պաշտոնում առաջադրում է Սամանթա Փաուերի թեկնածությունը: Մինչեւ վերջերս Փաուերը նախագահի հատուկ օգնականն էր եւ ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդում զբաղվում էր մարդու իրավունքների եւ միջազգային կազմակերպությունների հարցերով:**

**Օբաման վստահություն է հայտնել, որ 2009-ից ՄԱԿ-ում որպես ԱՄՆ մշտական ներկայացուցիչ աշխատող Ռայսը հաջողությամբ կկատարի իր նոր պարտականությունները:**

**Ի տարբերություն ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչի, նախագահի ազգային անվտանգության գծով օգնականի նշանակումը չի պահանջում օրենսդիրների համաձայնություն: Ուստի Ռայսը, որին հանրապետական ընդդիմությունը թույլ չէր տվել դառնալ պետքարտուղար, այս անգամ չի շփվի սենատորների հետ:**

**Նախագահը Դոնիլոնին շնորհակալություն է հայտնել բազմամյա ծառայության համար, նշելով, որ նա կպաշտոնավարի մինչեւ հունիսի վերջը:**

Պ. Ք.




# «Առաջարկում եմ ձեզ իմ ձեռքն ու սիրտը»,- Արցախում ասել է Մոնսերատ Կաբալիեն

Հունիսի 9-ին Երեւանում, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա աշխարհահռչակ սոպրանո, օպերային արվեստի դիցուհի Մոնսերատ Կաբալիեի համերգը: Նրա հետ հանդես կգան նրա դուստրը՝ ճանաչված սոպրանո Մոնսերատ Մարտին, մեցցո սոպրանո Ագոստինա Սմիմերոն, բարիտոն Դավիթ Բաբայանցը: Աշխարհահռչակ երգչուհին հանդես կգա Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի (ՀՊՖՆ) հետ, որի գեղարվեստական ղեկավարը եւ գլխավոր դիրիժորն է Էդուարդ Թոփչյանը: Նվագախմբի ելույթը կղեկավարի նաեւ Մոնսերատ Կաբալիեի եւ մյուս երգչուհիների հետ Հայաստան ժամանած հայտնի դիրիժոր Ռամոն Տեբարը: Հունիսի 3-ին երգչուհին իր դստեր եւ ստեղծագործական խմբի հետ այցելեց Արցախ: Հունիսի 4-ին աշխարհահռչակ երգչուհուն ընդունեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Արցախի նախագահը կարեւորել է Մոնսերատ Կաբալիեի այցն Արցախ: Հանդիպմանը ներկա էին Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը, ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, պաշտոնատար այլ անձինք: «Սա ոչ միայն քրիստոնեության կղզի է, այլեւ քրիստոնեության պատմության արմատը: Ես ոտքից գլուխ քրիստոնյա եմ»,- նշել է Մոնսերատ Կաբալիեն՝ ավելացնելով, որ այցելելու է Արցախի եկեղեցիները: «Ես այստեղ՝ Ստեփանակերտում եմ՝ որպես երգչուհի: Սակայն որպես մարդկային էակ՝ ես ներկայացնում եմ Միացյալ Ազգերի Կազմակերպությունը... Առաջարկում եմ ձեզ իմ ձեռքն ու սիրտը»,- ավելացրել է երգչուհին: Հիշեցնենք, որ աշխարհահռչակ սոպրանոն 1974թ. ճանաչվել է ՄԱԿ-ի պատվավոր դեսպան եւ 1991 թվականին՝ խաղաղության դեսպան (1991): Նա նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան է (1994): Արցախի նախագահ Բակո Սահակյանը Մոնսերատ Կաբալիեին եւ նրա դստերը՝ Մոնսերատ Մարտիին, հայ ստեղծագործողի կողմից պատրաստված ոսկյա խաչեր նվիրեց, որոնք նրանք կրեցին Գանձասարի վանքում Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի կողմից օրհնվելուց հետո: Այսօր երեկոյան երգչուհին, ստեղծագործական խումբը եւ արտերկրից ժամանած այլ հյուրերն այցելեցին նաեւ Շուշի, եղան Շուշիի Մայր տաճարում՝ Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում, այնուհետեւ այցելեցին Նորավանք եւ վերադարձան Երեւան:




Նշենք, որ Մոնսերատ Կաբալիեին ուղեկցում էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի տիկինը՝ Գոհար Սարգսյանը, եւ նախագծի հեղինակ, հայտնի աստղաֆիզիկոս Գարիկ Իսրայելյանը:

Ավելացնենք, որ մինչ այդ Արցախ էին այցելել անգլիացի աշխարհահռչակ բաս-կիթառահար, երգիչ եւ երգահան, «Deep Purple», «Black Sabbath» խմբերի նախկին անդամ, «Black Country Communion» սուպերխմբի ներկայացուցիչ, աշխարհահռչակ Գլեն Հյուզը (Glenn Hughes), Դերեկ Շերինյանը, հանրահայտ Ալ Բանոն, հայտնի տիեզերագնաց Չառլի Դյուկը (Charlie Duke)՝ «Ապոլոն-16»-ից, որ 12 լուսնագնացներից 10-րդն է, եւ իր առաքելությունը կատարել է 36 տարեկանում՝ լինելով ամենաերիտասարդ լուսնագնացը: Անցյալ տարի Ստեփանակերտ էր այցելել նաեւ շվեյցարացի աստղագնաց Կլոդ Նիկոլիեն: Հիշեցնենք, որ անցյալ տարի Գլեն Հյուզը, Դերեկ Շերինյանը եւ Dorians խումբը մեծ համերգ տվեցին Ստեփանակերտի հրապարակում:

# Ասմունքի վարպետ Յակոբ Գոյումճեան Ամմանի մէջ

**Լիբանանահայ յայտնի մտաւորական, արուեստի գործիչ, ճարտարապետ Յակոբ Գոյումճեանի օրերս մատուցած ասմունքի երեկոն անգամ մը եւս լայնօրէն արձագանգ գտաւ Ամման-Յորդանանի մէջ: Յակոբ Գոյումճեանը, իր ունեցած ազգային եւ միջազգային ճարտարապետական ոճով եւ բարձր կատարողականութեամբը, եւ միաժամանակ իր ունեցած երկար տարիներու բեմական փորձառութեամբը «գովերգեց» հայ բանաստեղծներն ու քերթողները՝ Վահան Թէքէեան, Սիլվա Կապուտիկեան, Գէորգ Էմին, Վահագն Դաւթեան, Եղիշէ Չարենց, Պարոյր Սեւակ, Վահան Տէրեան ու Սայաթ-Նովա:**

**Ասմունքի յարգելի վարպետը իր մատուցած քերթողական իւրաքանչիւր կտորի մասին որոշ բացատրութիւններով կրցաւ անխզելիօրէն շաղկապել բոլորին ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնը սրահը բերնէ բերան լեցուած արուեստի սիրահարներուն եւ բեմին միջեւ: Իր ելոյթի բոլոր յայտերով նա մեծապէս գոհացուց Յորդանանի Գրողներու միութեան արաբ հանդիսատեսները նաեւ, իր արաբերէն լեզուով տուած բացատրութիւններով: Օրուան յայտագիրը կ՚ընդգրկէր «Գովք Հայաստանի»ն, «Լուսամփոփի պէս աղջիկ»ը, «Երկիր Նայիրի»ն, «Աշնան մեղեդի»ն, Սայաթ-Նովային նուիրուած փունջ մը քերթուածներ, «Օրը մթնեց»ը, «Համայն աշխարհի հաշուիչ մեքենաներին»ը, «Եղիցի լոյս»ը, «Աղօթք վաղուան սեմին առջեւ»ը, «Ռէքուիեմ»ը եւ «Սասունցիների պարը»:**

**Հանդիսութեան բացման խօսքը կատարեց Ամմանի մշակութային միութեան անդամ Լիլիթ Մելքոնեանը, իսկ ԱՄՄ վարչական անդամ Պր. Հրայր Սիմոնեանը արաբերէն լեզուով ընթերցեց Եղիշէ Չարենցի կենսագրականը: Եղիշէ Չարենցի կողմէ Սայաթ-Նովայի համար գրուած գովերգն ու երախտիքը գեղազարդուեցաւ Հայրենիքէն որպէս ԱՄՄ-ի պարուսոյց երկիրս գտնուող Յասմիկ Դաւթեանի մենապարով: Անկասկած, Յակոբ Գոյումճեանի ներդրումը ԱՄՄ-ի ասմունք կատարողներու եւ սիրողականներու յառաջխաղացման վրայ եղած է անգնահատելի:**

**Ուրախալի է, որ ներկայիս յորդանանահայ գաղութի ասմունքողներու գրական բարձր մակարդակը, որակը եւ ազգային նկարագիրը կը կերտեն գաղութին: Յանկալի է նաեւ, որ պրն Գոյումճեան ասմունքի իր յաճախակի առաքելութեանց ընթացքին ներգրաւէ եւս Յորդանանը, ներշնչելու եւ ոգեւորելու հայ պատանին եւ երիտասարդը, ինչպէս եւ ասմունքի նոր սերմեր ցանելու մեր դեռատի սերունդին մէջ:**

ՄԱՐԱԼ ՆԵՐՍԷՍԵԱՆ
Ամման, Հորդանան

ՎԱՆԱՁՈՐ

# Սարոյանական 105-ամյա «Ժամանակ, կյանք, անմահություն»



**20-րդ դարի ամերիկյան գրականության ականավոր ներկայացուցիչներից Վիլյամ Սարոյանի ծննդյան 105-ամյակի կապակցությամբ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում օտար լեզուների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր «Ժամանակ, կյանք, անմահություն» խորագիրը կրող միջոցառում: Պատվավոր հյուրերի թվում էր նաեւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի տնօրեն Ջեյմս Լենդը:**

**ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը ողջունեց միջոցառման մասնակիցներին ու կազմակերպիչներին, ապա մասնավորապես ասաց. «Այսօրվա միջոցառումը խարսխված է գրական-մշակութային մի կերպարի վրա, որի կյանքն ու ստեղծագործությունը լավագույն վկայություններն են մեր երկու ժողովուրդների մերձավորության: Վիլյամ Սարոյանը, իրավի, հանճարեղ օրինակ է այն բանի, թե ինչ պտուղ կարող է տալ հայ սերմը բարեկամի բարեբեր հողում, ինչպես կարող են միահյուսվել հայ ոգին ու ամերիկացու կենսակերպը, ինչպես կարող է անգլերեն գրող մարդը, իբրեւ ամերիկացի նայելով աշխարհին, այնուամենայնիվ աշխարհն զգալ հայերեն: Ես լիահույս եմ, որ միջոցառումն իրենով խորհրդանշելու է երկու՝ ամերիկացի եւ հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը, բարեկամություն, որը լրացուցիչ հավաստումների կարիք ամենեւին չունի, քանզի պատմության ընթացքն է հավաստել այդ բարեկամության թե՛ անկեղծությունը եւ թե՛ ամրությունը»:**

**Գ. Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց Ջեյմս Լենդին հրավերն ընդունելու համար եւ նվիրեց ինստիտուտի հրատարակած՝ Հովհ. Թումանյանի երկերի հատընտիր ժողովածուն՝ բանաստեղծի ոսկե դիմապատկերով, կոչ անելով հյուրին՝ վարակվել նաեւ թումանյանական ոգով:**

**Միջոցառմանը հայերեն եւ անգլերեն լեզուներով հնչեցին Սարոյանի ստեղծագործություններից, որոնք կատարեցին ինչպես ուսանողները, այնպես էլ օտար լեզուների ամբիոնի դասախոսները: Ներկայացվեց Սարոյան հայը եւ ամերիկացին, Սարոյան հայրենասերն ու գրողը, ի՞նչ մրցանակների է արժանացել, ինչպիսի՞ն էր Սարոյան հումանիստը, ի՞նչ հուշեր կան նրա հետ կապված: Ուսանողները ներկայացրին նաեւ հատված հանրահայտ «Մարդը, ում սիրտը լեռներում է» պատմվածքից: Սարոյանը հորդորում էր բոլորին՝ կյանքն ապրել այնպես, որ մեզ բաժին ընկած ժամերին չավելացնենք աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունենք նրա լույսն ու խորհուրդը: Այդպես էր ապրում ինքը՝ Սարոյանը, ում կյանքի ամենամեծ հպարտությունը հայ լինելն էր...**

**Ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի վարիչ, դոցենտ Սոֆի Սարգսյանի հավաստմամբ՝ նման միջոցառումները նպաստում են երկու երկրների համագործակցության ամրապնդմանը:**

**Հանդիպումից եւ միջոցառումից տպավորված՝ ԱՄՆ դեսպանատան բարձրաստիճան հյուրը շնորհակալություն հայտնեց ցերեկույթի նախաձեռնողներին. «Այսօր ես ինձ համար բացահայտեցի միանգամայն նոր Սարոյանի, իբրեւ ամերիկացի շատ հետաքրքրական բաներ իմացա նրա մասին: Անչափ հաճելի էր լսել նաեւ ուսանողների այսքան վարժ անգլերենի իմացությունը, ինչը վկայում է դասախոսական կազմի բարձր պրոֆեսիոնալիզմի մասին»: Այնուհետեւ Ջ. Լենդը ինստիտուտին նվիրեց ամերիկյան ժամանակակից հեղինակների նոր հրատարակություններ՝ հույս հայտնելով, որ ՎՊՄԻ-ի հետ դեսպանատան այս գեղեցիկ համագործակցությունը դեռ կշարունակվի:**

ՆԱՐԻՆԵ ՆԵՐՍԵՍՅԱՆ
Վանաձոր

# Հայտնի են «Հազարան բլբուլ» մանկապատանեկան մյուզիքլների հանրապետական մրցույթ-փառատոնի հաղթողները

**Կայացել է «Հազարան բլբուլ» մանկապատանեկան երաժշտական բեմադրությունների հանրապետական 2-րդ մրցույթ-փառատոնի գալա-համերգը, որի ընթացքում հայտարարվել են լավագույնը ճանաչված 6 ներկայացումները:**

**Գլխավոր մրցանակը ստացել է Երեւանի՝ Ջայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոցը (Լեոնել Բարտ, «Օլիվեր»):**

**Առաջին մրցանակին արժանացել է Արմավիր քաղաքի արվեստի պետական քոլեջը (Լեոնարդ Բերնստայն, «Վեսթսայդյան պատմություն»): Երկրորդ մրցանակը կիսել են Արարատ քաղաքի Ռ. Սարյանի անվան արվեստի դպրոցը (Մոցարտ, «Կախարդական սրինգ») եւ Երեւանի Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոցը (Ռոբերտ Շերման, «Մերի Փոփինս»), իսկ երրորդը՝ Դիլիջանի արվեստի պետական քոլեջին կից երաժշտական դպրոցը (Քեյն, «Պանդորայի արկղը») եւ Երեւանի Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցը (Ռիչարդ Ռոջերս, «Երաժշտության ձայները»):**

**Հայտնի են դարձել նաեւ «Լավագույն դերակատարուհի», «Լավագույն դերակատար», «Հանդիսատեսի համակրանք», «Հատուկ մրցանակ» անվանակարգերում հաղթողների անունները:**

**Հաղթողները պարգեւատրվել են հատուկ պատրաստված անակնկալ մրցանակներով եւ պատվոգրերով: Միջոցառման ավարտին բոլոր մասնակիցների կատարմամբ առաջին անգամ հնչել է հատուկ «Հազարան բլբուլ» մրցույթ- փառատոնին նվիրված՝ «Օրն է երբ բացվում» երգը (երաժշտությունը՝ Մշակույթի վաստակավոր գործիչ Էդգար Գյանջումյանի, խոսք՝ Մարինե Թագակչյանի):**

**Արդեն երկրորդ տարին Հայաստանում անցկացվում է «Հազարան բլբուլ» մանկապատանեկան երաժշտական բեմադրությունների հանրապետական ամենամյա մրցույթ-փառատոնը: Այս տարի մրցույթ-փառատոնն անցկացվել է ՀՀ Մշակույթի նախարարության, «Առաջ, երեխաներ» կրթամշակութային հասարակական կազմակերպության եւ «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամի նախաձեռնությամբ:**

*Մրցույթ-փառատոնի գլխավոր հովանավորն է ՎիվաՍել-ՄՏՍ-ը:*

# Անհաջող մեկնարկ




Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը Եվրո-2015-ի ընտրական մրցաշարի մեկնարկային խաղում անհաջողության մատնվեց՝ 1-2 հաշվով զիջելով իսլանդացիներին: Չնայած եթե հայ ֆուտբոլիստները խաղավերջում պաշտպանությունում աչալրջորեն գործեին, ապա խաղադաշտը կթողնեին գոնե մեկ միավոր վաստակած:

Հանդիպումն ավելի ակտիվ սկսեցին ֆիզիկական լավ տվյալներով աչքի ընկնող իսլանդացիները, որոնք մի քանի վտանգավոր պահեր ստեղծեցին Գոռ Մանուկյանի պաշտպանած դարպասին: Դրանցից մեկի ժամանակ հսկողությունից դուրս մնացած Ջոն Բոդվարսոնը կարող էր գրավել դարպասը, բայց, բարեբախտաբար, մեր հավաքականին օգնության եկավ դարպասաձողը:

Հայաստանի հավաքականի խաղն առաջին խաղակեսում չստացվեց: Մերոնք մի տեսակ պասիվ էին գործում առջեւի գծում, իսկ պաշտպանությունում այնքան էլ հուսալի չէին խաղում: Միակ վտանգավոր պահը մեր ֆուտբոլիստները ստեղծեցին 40-րդ րոպեին, երբ դիպուկ հարված կատարեց Կարեն Մուրադյանը, սակայն դարպասապահը հետ մղեց գնդակը: Իսկ ահա հյուրերը կազմակերպված հակագրոհի ժամանակ հասան հաջողության: Աչքի ընկավ Էմիլ Ատլասոնը:

Ընդմիջումից հետո դաշտի տերերը որոշ չափով ակտիվացան՝ փորձելով վերականգնել հավասարակշռությունը: Հարձակման աջ թեւում իր ակտիվությամբ աչքի էր ընկնում Աղվան Պապիկյանը, թեեւ երբեմն չարաշահում էր անհատական խաղը: Հենց նրա ջանքերով էլ 67-րդ րոպեին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Աջ թեւից նրա փոխանցումը մոտ տարածությունից եզրափակեց ֆիչ առաջ խաղադաշտ դուրս եկած Արոս Սարդարյանը:

Խփած գոլից հետո խաղը զգալիորեն աշխուժացավ, տեմպը բարձրացավ: Մեր ֆուտբոլիստները ոգեւորված հաջողությունից, փորձում էին խփել երկրորդ գնդակը: Կարելի է հիշատակել Սարգիս Ադամյանի հարվածը, որից հետո դարպասապահը մեծ դժվարությամբ գնդակը հանեց անկյունային: Թվում էր, թե խաղը կավարտվի ոչ-ոքի, սակայն խաղավերջում կրկին անփույթ խաղացին մեր պաշտպանները՝ հսկողությունից դուրս թողնելով Ատլասոնին, որը մեն-մենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, խփեց հաղթական գնդակը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում հավաքականների մարզիչները հետեւյալ կարծիքներն արտահայտեցին:

**Ռաֆայել Նազարյան** (Հայաստան) - Շատ գոհ եմ մեր թիմի ցուցադրած խաղից: Մեր թիմում լավագույնը Վարազդատ Հարոյանն էր: Եթե հաշվի առնենք, որ դարպասապահ Գոռ Մանուկյանն առաջին խաղն էր անցկացնում, ապա նա նորմալ գործեց: Շատ դժվար էր նման մրցակցի դեմ խաղալը: Մեր ֆուտբոլիստների մոտ զգացնել տվեց միասին խաղալու փորձի բացակայությունը: Երկրորդ գոլի դրվագում սխալվեց Գրիգոր Հովհաննիսյանը: Չափազանց շատ էներգիա էինք ծախսել: Իմ կարծիքով, եթե կարողանայինք մի փոքր ավելացնել՝ կհաղթեինք: Որակական առումով ներկայիս հավաքականը գերազանցում է նախորդին: Ես Սարգիս Ադամյանին ընդամենը 6 օր եմ ճանաչում, ուստի ռիսկի չդիմեցի նրան մեկնարկային կազմում ընդգրկելու: Նրա համար էլ կարող էր հոգեբանական խնդիր առաջանալ:

**Էյոլֆուր Սվերիսոն** (Իսլանդիա) - Կարծում եմ, որ եղանակային պայմանները շատ ծանր էին մեզ համար: Առաջին խաղակեսում լիովին վերահսկում էինք խաղի ընթացքը՝ շեշտը դնելով մեր ֆիզիկական կարողությունների վրա: Ունեինք գոլ խփելու մի քանի հնարավորություններ, որոնցից օգտագործեցինք միայն մեկը: Երկրորդ խաղակեսում Հայաստանը կերպարանափոխվեց եւ շատ խնդիրներ ունեցանք: Հատկապես ակտիվ էր Աղվան Պապիկյանը: Թեեւ խաղավերջում բավականին հոգնած էինք, բայց մեզ հաջողվեց կորզել հաղթանակը: Եթե նույնիսկ ոչ-ոքի գրանցվեր, չէր դժգոհի: Թեեւ մենք ավելի շատ գոլային պահեր ունեցանք, ուստի մեր հաղթանակն արդարացի էր:

## ՇԱԽՄԱՏ

# Ոչ-ոքի առաջատարի հետ մրցավեճում

**Մումբայի շախմատի մրցաշարի 10-րդ տուրում ուշադրության կենտրոնում Զավեն Անդրեասյանի եւ միանձնյա առաջատար Լեւան Պանցուլայայի պարտիան էր, որն ավարտվեց ոչ-ոքի: Զավենը վաստակեց 7,5 միավոր եւ մրցաշարի ավարտական տուրից առաջ կես միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Լեւան Պանցուլայային, Միխեիլ Մչեդլիշվիլուն եւ Ֆարուխ Ամոնատովին: Վերջինիս հետ մրցավեճում Լեւոն Բաբուջյանը պարտվեց եւ 7 միավորով նահանջեց 7-րդ տեղը:**

**Տուրն անհաջող էր նաեւ Դավիթ Պետրոսյանի համար, որը զիջեց Ալեքսանդր Զուբարեւին: Իսկ ահա Գեւորգ Հարությունյանը հաղթելով Ռասեթ Զիաթդինովին, վաստակեց 7 միավոր: Վերջապես հաջողությունն ուղեկցեց Վահե Բաղդասարյանին, որը պարտության մատնելով Սուդակար Բաբուին, վաստակեց 6 միավոր:**

**Անհաջող խաղացին 4-ական միավոր ունեցող Մարիա Գեւորգյանն ու Արմինե Բաբայանը՝ զիջելով մրցակիցներին:**

# Պետրոսյանն ու Մելքումյանը գլխավորեցին աղյուսակը

Ալբենայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Հրանտ Մելքումյանն ու Տիգրան Պետրոսյանը կրկին հաղթեցին եւ վաստակելով 4,5-ական միավոր, Պրասան Վիշնուի, Սանդրո Մարեկոյի, Վլադիսլավ Նեւեդնիչի ու Եվգենի Սվեշնիկովի հետ գլխավորեցին մրցաշարային աղյուսակը: Տիգրանը հաղթեց Յուրի Սոլոդովնիչենկոյին, Հրանտը պարտության մատնեց Վասիլ Սպասովին:

Հաջող խաղացին նաեւ Ավետիք Գրիգորյանն ու Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը՝ հաղթելով համապատասխանաբար Եհուդա Գրինֆելդին եւ Վլադիմիր Սվեշնիկովին: Հայ շախմատիստներն ունեն 4-ական միավոր:

# 7 հայ բռնցքամարտիկներ կպայքարեն եզրափակիչի ուղեգրերի համար

**Մինսկում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում հայտնի են կիսաեզրափակիչի բոլոր մասնակիցները: Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի համար պայքարը շարունակում են տարբեր երկրների հավաքականներում հանդես եկող 7 հայ բռնցքամարտիկներ, որոնք այսօր կվիճարկեն եզրափակիչի ուղեգրերը: Հայաստանի միակ ներկայացուցիչն Արամ Ավագյանն է (56 կգ), որը մենամարտելու է ուկրաինացի Միկոլա Բուցենկոյի հետ:**

**Կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեց նաեւ ռուսաստանցի Հովիկ Հովհաննիսյանը, որը հաղթեց վրացի Ավթանդիլ Ցուբաբրիային: Հովհաննիսյանը կիսաեզրափակիչում կմենամարտի իռլանդացի Միչել Կոնլանի հետ, որը 1/8 եզրափակիչում պայքարից դուրս էր մղել Նարեկ Աբգարյանին:**

**Հերթական հաղթանակը տոնեց Բելառուսը ներկայացնող Վազգեն Սաֆարյանը (60 կգ), որի մրցակիցը Գերմանիայի ներկայացուցիչ Կասրիոս Սոպան էր: Եզրափակիչի ուղեգրի համար Վազգենը կմենամարտի հունգարացի Միկլոշ Վարգայի հետ: Մինչեւ 69 կգ քաշային կարգում էլ Արայիկ Մարությանը հաղթելով վրացի Զալ Կվաչատաձեին, կիսաեզրափակիչում կմրցի բելառուս Պավել Կաստրամինի հետ:**

**Հիշեցնենք, որ ավելի վաղ կիսաեզրափակիչ էին մտել ռուսաստանցիներ Դավիթ Հայրապետյանն (49 կգ) ու Արմեն Զաքարյանը (64 կգ) եւ Գերմանիան ներկայացնող Արտյոմ Հարությունյանը (64 կգ):**

# ՀՀ հավաքականն առաջադիմել է մեկ տեղով

**Հայաստանի ազգային հավաքականը մեկ տեղով բարձրացել է եւ 89-րդ հորիզոնականն է զբաղեցնում ՖԻՖԱ-ի դասակարգման նոր աղյուսակում: Ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի առաջիկա մրցակից Մալթայի հավաքականը պահպանել է դիրքը 156-րդ տեղում, իսկ Դանիայի ընտրանին մնացել է 20-րդ հորիզոնականում:**

**Դասակարգման ցուցակը գլխավորում է Իսպանիայի հավաքականը: Լավագույն տասնյակում են նաեւ Գերմանիայի, Արգենտինայի, Խորվաթիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի, Կոլումբիայի, Իտալիայի, Անգլիայի, Էկվադորի հավաքականները:**

**Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից լավագույն արդյունքն ունի Ռուսաստանը, որը 11-րդ տեղում է: Մյուս հավաքականների ցուցանիշներն այսպիսին են. 39. Ուկրաինա, 58. Ուզբեկստան, 67. Բելառուս, 90. Էստոնիա, 96. Վրաստան, 105. Լիտվա, 112. Տաջիկստան, 118. Ադրբեջան, 119. Լատվիա, 132. Թուրքմենստան, 134. Մոլդովա, 143. Ղրղզստան, 146. Ղազախստան:**

# Վարդան Մինասյան. «Մալթային հաղթելն այնքան էլ դյուրին խնդիր չէ»

**Այսօր ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում Հայաստանի ազգային հավաքականը «Հանրապետական» մարզադաշտում կհյուրընկալի խմբի հետնապահ Մալթայի ընտրանուն, որին անցյալ տարվա սեպտեմբերի 7-ին կայացած խաղում մեծ դժվարությամբ էր հաղթել: Միակ գոլի հեղինակ էր դարձել Արթուր Սարկիսովը:**




**Խաղի նախօրեին հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հանդիպեց հայ եւ մալթացի լրագրողների հետ: Նա նշեց, որ հավաքականի ֆուտբոլիստները շատ լրջորեն են նախապատրաստվում առաջիկա խաղին: Մի փոքր վնասվածք ունի Կառլեն Մկրտչյանը, սակայն հույս կա, որ նա կմասնակցի խաղին: Դեղին քարտերի պատճառով Մալթայի հետ հանդիպումը բաց կթողնի Գեւորգ Ղազարյանը: Ամեն դեպքում մարզիչը հուսով է, որ կազմի օպտիմալ տարբերակ կգտնվի՝ հաշվի առնելով հավաքականի ֆուտբոլիստների ֆունկցիոնալ տարբեր պատրաստվածությունը, ոմանց մոտ խաղային պրակտիկայի պակասը:**

**Վարդան Մինասյանը նշեց, որ թեեւ մրցակիցը խմբի հետնապահն է, սակայն այնքան էլ դյուրին խնդիր չէ Մալթային հաղթելը: Դա ֆուտբոլիստներն իրենց մաշկի վրա զգացել են անցյալ տարվա խաղում: Ըստ մարզչի, մեր ֆուտբոլիստների համար նշանակություն չունի, թե ի՞նչ ուժի տեր է մրցակիցը: Հավաքականի առջեւ յուրաքանչյուր խաղում խնդիր է դրվում հաղթել: Այլ հարց է, որ դա միշտ չէ, որ հաջողվում է:**

**Բնականաբար, առաջիկա 2 խաղերում հավաքականը ելնելով մրցակիցների խաղամակարդակից, տարբեր մարտավարությամբ է խաղալու, նույնիսկ կազմում կլինեն փոփոխություններ: Բացի այդ, կան դեղին քարտեր ունեցող ֆուտբոլիստներ, օրինակ՝ Յուրա Մովսիսյանը, որոնք պետք է զգույշ գործեն, որպեսզի նորը չստանան եւ որակազրկվեն:**

**Վարազդատ Հարոյանը հանդես կգա երիտասարդական հավաքականում, հետո Կարեն Մուրադյանի հետ կմիանա ազգայինին: Հնարավոր է, որ երիտասարդականի եւս մի քանի խաղացողներ ընդգրկվեն ազգային հավաքականում, նայած թե որ դիրքերում դրա անհրաժեշտությունը կլինի:**

**Ինչպես հայտնի է, հավաքականի մի խումբ ֆուտբոլիստներ Հենրիխ Մխիթարյանի գլխավորությամբ շուտ էին ժամանել Երեւան եւ մինչեւ հավաքի սկսվելը մարզվում էին: Իսկ ահա Յուրա Մովսիսյանը մեկնել էր ԱՄՆ եւ մեկ օր ուշացումով միացավ իր խաղընկերներին: Մեկնաբանելով այդ փաստը, Վարդան Մինասյանը նշեց, որ իր հետ այդ քայլը համաձայնեցված էր, ոչ ոք հավաքականում արտոնյալ պայմաններում չի գտնվում: Եվ ընդհանրապես գլխավոր մարզիչը գտնում է, որ հաջողության առաջին գրավականը կոլեկտիվում միասնականությունն է, աշխատանքային ջերմ մթնոլորտի առկայությունը: Նա մեկ անգամ եւս հաստատեց, որ այդ առումով հավաքականում ոչ մի խնդիր չկա: Այլ հարց է, որ որոշ ֆուտբոլիստներ ֆունկցիոնալ ոչ լավ վիճակում գտնվելով, չեն կարողանում իրենց բնորոշ խաղը ցուցադրել: Իսկ ահա ցանկության բացակայության մեջ որեւէ մեկին մեղադրելու առիթ չի եղել:**

# Պիեռո Գեդին. «Մենք զբոսնելու համար չենք ժամանել Հայաստան»



**Հունիսի 5-ին Երեւան ժամանած Մալթայի ազգային հավաքականը երեկ առավոտյան մարզվեց «Հանրապետական» մարզադաշտում, իսկ մինչ այդ մալթացիների գլխավոր մարզիչ Պիեռո Գեդինը հանդիպեց լրագրողների հետ:**

**Նա նշեց, որ հավաքականը շատ լրջորեն է նախապատրաստվել Հայաստանի հետ ընտրական խաղին, քանի որ մրցակիցը շատ ուժեղ է: Թեեւ Մալթայի հավաքականի կազմում կբացակայեն 4 լեգեոնականները, սակայն նրանց համապատասխան փոխարինողներ կգտնվեն: Գեդինը նշեց, որ հավաքականի ֆուտբոլիստները բնավ էլ զբոսնելու համար չեն ժամանել Երեւան ու ամեն ինչ կանեն մեկ միավոր վաստակելու համար: Հավաքականի առջեւ խնդիր է դրվում յուրաքանչյուր խաղում լավ հանդես գալ, պայքարել մինչեւ վերջ:**

**Մալթայի հավաքականի գլխավոր մարզիչը հետեւել է Հայաստանի հավաքականի ելույթներին եւ ծանոթ է ֆուտբոլիստներին, որոնք եվրոպական երկրների թիմերում են հանդես գալիս: Թեեւ Հայաստանի հավաքականն ընտրական այս փուլում այնքան էլ հաջող հանդես չի գալիս, սակայն Գեդինի համար մեր ընտրանին մնում է ուժեղագույններից մեկն ընտրական խմբում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Կառավարության նիստում

### Պետական աջակցություն 9 երեխայից ավելի 24 բազմազավակ ընտանիքներին

Արմավիրի մարզպետարանին կառավարությունը երեկ 7,5 մլն դրամ հատկացրեց՝ Մրգաշատ գյուղի բնակիչ Հունան Մխիթարյանի 14 անձից բաղկացած ընտանիքի համար երկհարկանի առանձնատուն գնելու համար: Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** տեղեկացրեց, որ Հայաստանում կան 9 եւ ավելի երեխա ունեցող 24 բազմազավակ ընտանիքներ, որոնք բոլորն էլ կստանան աջակցություն պետությունից:

### Առնվազն երեք ազգային ավիափոխադրողներով՝ փուլ առ փուլ դեպի «բաց երկինք»

Կառավարությունը երեկ լուծում տվեց վերջին ամիսներին խնդրահարույց դարձած օդային փոխադրումների հարցին: Այն բանից հետո, երբ սնանկացավ ազգային ավիափոխադրող «Արմավիան», այս ոլորտում անորոշ իրավիճակ էր ստեղծվել: Երեկ այստեղ հստակեցում մտցվեց՝ որոշվեց ազատականացնել օդային փոխադրումների ոլորտը, սակայն փուլային տարբերակով:

Հարցը կառավարությունում, ապա նաեւ լրագրողների առջեւ ներկայացնող քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ **Արտյոմ Մովսեսյանը** նշեց, որ Հայաստանի Հանրապետության օդային փոխադրումների բնագավառի հետագա զարգացման ուղղությունները որոշելու նպատակով վերլուծություններ են իրականացվել հասարակական կազմակերպությունների, ավիացիայի ոլորտում իրազեկված գործարարների, Հայաստանում ներկայացված միջազգային կառույցների՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչների հետ: Ձեւավորվել էին լուծման երեք տարբերակներ՝ ունենալ պետական կամ պետական մասնակցությամբ ավիափոխադրող, իրականացնել ազատականացված բաց երկնքի քաղաքականություն եւ իրականացնել ազատականացման փուլային քաղաքականություն:

Առաջին տարբերակի դեպքում տրամաբանորեն հետեւելու է պետության կողմից մեծ հովանավորչություն ավիափոխադրողի նկատմամբ, ինչը բացասաբար էր անդրադառնալու ինչպես մրցակցային դաշտի վրա ընդհանրապես, այնպես էլ տվյալ ընկերության մրցունակության վրա՝ ինչպես դա եղավ «Արմավիայի» դեպքում: Բացի դրանից, պետական բյուջեի վրա նույն ընկերության աշխատանքի ընթացքում հնարավոր ռիսկեր կարող են առաջանալ:

Երկրորդ տարբերակը ընդունելու դեպքում, մրցակցային դաշտ ունենալուն զուգահեռ վտանգի տակ է դրվում հետագայում հայկական ավիափոխադրող ունենալու գաղափարը: Այս պարագայում Հայաստանը կախման մեջ կընկներ արտաքին փոխադրողներից:

Ըստ Արտյոմ Մովսեսյանի՝ ընդունելի է համարվել երրորդ տարբերակը, քանի որ կառավարության կողմից քաղաքացիական ավիացիայի բնագավառում ազատականացման քաղաքականություն իրականացնելիս պետք է հաշվի առնել մեր երկրի աշխարհաքաղաքական իրավիճակը եւ հարեւան պետությունների հետ ունեցած հարաբերությունները: Այդ նկատառումով կսահմանվի ազատականացման առաջին փուլ՝ մինչեւ երեք կամ հինգ տարի ժամկետով: Կառավարությունն ակնկալում է, որ այս որոշման արդյունքում հայկական ավիափոխադրողների միջեւ կստեղծվի մրցակցություն, ինչը իր հերթին կհանգեցնի ուղեւորային եւ բեռնային փոխադրումների աճին եւ սակագների նվազեցմանը:

Վարչապետ Տիգրան Սարգսյանն այս առնչությամբ հայտնեց, որ ոլորտի վերաբերյալ ռազմավարության ընդունմամբ կունենանք առնվազն երեք հայկական ավիափոխադրողներ, որոնք կընտրվեն մրցույթով: Արտյոմ Մովսեսյանը տեղեկացրեց, որ հայկական ավիափոխադրողների առջեւ խնդիր է դրվելու առավելագույնս օգտագործել «Արմավիայի» կադրերին: Նա միաժամանակ բացառեց «Արմավիայի» կրկին ազգային ավիափոխադրող լինելու հնարավորությունը:

### Հարկային եւ մաքսային արտոնություններ՝ Դիլիջանի միջազգային դպրոցին

Հարկային եւ մաքսային արտոնություններ կտրամադրվեն «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագրի շրջանակներում իրականացվող գործարքների համար 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա: Կառավարության հիմնավորմամբ, հարկային եւ մաքսային արտոնությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս, որ ծրագրի իրականացման համար նախատեսված՝ նվիրաբերություններից գոյացած միջոցները ամբողջությամբ ծախսվեն ծրագրի իրականացման համար:

Տեղեկացնենք, որ Դիլիջանում միջազգային ստանդարտներին համապատասխան դպրոցի արժեքը գնահատվում է շուրջ 550 մլն դոլար, որից 150 մլն դոլարը նախատեսվում է ներդնել դպրոցի շենքի կառուցման եւ գույքային միջոցների ձեռքբերման, իսկ 400 մլն դոլարը՝ գործառնական ծախսերի ու դպրոցի հետագա զարգացման ուղղությամբ:

Ակնկալվում է, որ միջազգային դպրոցի ծրագրի շրջանակներում Դիլիջան քաղաքի ենթակառուցվածքների զարգացմանը կուղղվի 60-70 մլն դոլար, տարածաշրջանում ապրանքների արտադրության եւ ծառայությունների մատուցման ծավալը կաճի 10-12 տոկոսով, մինչեւ 2020 թվական տեղական բյուջեի տարեկան մուտքերը կկազմեն շուրջ 1 մլն դոլար, գործազրկության մակարդակը կկրճատվի մինչեւ 12 տոկոս, աղքատության մակարդակը՝ մինչեւ 11 տոկոս, օտարերկրյա զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի մինչեւ 35 հազար մարդ:

### Նվազագույն աշխատավարձը 45 հազար հուլիսի 1-ից, իսկ աշխատավարձերի բարձրացումը՝ 2014-ի հունվարի 1-ից

35 հազար դրամ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը կառավարության երեկվա որոշմամբ հուլիսի 1-ից կավելանա 10 հազար դրամով: Այդ նպատակով փոփոխություններ կկատարվեն մի շարք օրենքներում: Ինչպես հայտնեց հարցը ներկայացնող աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արտեմ Ասատրյանը**, այս փոփոխության համար բյուջեից լրացուցիչ 6 մլրդ դրամ կծախսվի: Նրա տեղեկացմամբ՝ մինչեւ 2017-ը նվազագույն աշխատավարձի չափը կկրկնապատկվի:

Խոսելով աշխատավարձերի մասին՝ վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց, որ աշխատավարձերը կբարձրացվեն նաեւ 2014-ի հունվարի 1-ից, որի նպատակով կհատկացվի շուրջ 50 մլրդ դրամ: «Սա շոշափելի փոփոխություն կլինի աշխատավարձերի ոլորտում», ասաց վարչապետը:

### Սոցիալապես անապահով խավի համար գազի գնի սուբսիդավորումը շարունակվելու է

Ավելի քան 70,5 մլն դրամ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը կվճարի «Հայռուսգազարդին»՝ որպես Հայաստանում ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների կողմից 2013 թ. հունվար-մարտ ամիսներին սպառված բնական գազի համապատասխան քանակության համար մասնակի փոխհատուցում: «Այս ծրագիրը շարունակվելու է, որպեսզի բնական գազը սոցիալապես անապահով ընտանիքների համար չթանկանա», հավաստիացրեց վարչապետ Տիգրան Սարգսյանը:

### Հյուսիս-հարավի առնչությամբ բանակցություններ Ասիական զարգացման բանկի հետ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության խնդիրներին անդրադառնալով՝ երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանն նշեց, որ անհրաժեշտություն կա հրատապ շտկումներ մտցնելու, քանի որ բացահայտված խնդիրների առնչությամբ առաջացել են ֆինանսական պարտավորություններ: «Հանձնարարական է տրվում էկոնոմիկայի, տրանսպորտի եւ կապի, ֆինանսների եւ արտաքին գործերի նախարարություններին՝ անհապաղ բանակցություն սկսել Ասիական զարգացման բանկի հետ, փոփոխություններ կատարել պայմանագրերում, որ մենք ունենք այդ բանկի հետ, որպեսզի բացահայտված թերությունների պատճառով տույժ-տուգանքներ չկիրառվեն, քանի որ ձգձգումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ բազմաթիվ մեթոդաբանական փոփոխություններ են իրականացվել նախնական պայմանագրում», ասաց նա: Ըստ վարչապետի, գերմանական, ֆրանսիական եւ իտալական ընկերությունների կողմից ծրագրի կառավարմանը վերաբերվող դժգոհության մասին անհապաղ պետք է տեղյակ պահվի Ասիական զարգացման բանկին եւ բանակցություններ սկսվեն, որպեսզի Հայաստանը տույժ-տուգանք չվճարի: Տիգրան Սարգսյանը էկոնոմիկայի նախարարին հանձնարարեց սկսել բանակցային գործընթացը՝ պատրաստակամություն հայտնելով անհրաժեշտության դեպքում անձամբ միջամտել խնդրին:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ԲՈՍՏՈՆԻ ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

# Ամերիկացիների բոլոր հեռախոսազանգերը վերահսկվում են

**ԱՄՆ իշխանությունները երկրի խոշորագույն բջջային օպերատոր Verizon-ին պարտավորեցրել են ամեն օր Ազգային անվտանգության գործակալությանը (ԱԱԳ) տեղեկություններ փոխանցել սեփական բաժանորդների բոլոր հեռախոսազանգերի մասին: Այդ գաղտնի դատական կարգադրության պատճենը հայտնվել է բրիտանական «Գարդիան» թերթի տրամադրության տակ:**

**Արտաքին հետախուզության եւ դիտարկման գաղտնի դատարանը Verizon-ին պարտավորեցրել է «մշտական, ամենօրյա հիմունքներով» ԱԱԳ-ին տրամադրել զրուցակիցների համարները, սարքերի եզակի նույնացուցիչները, ստույգ տարեթիվը, հեռախոսազանգերի ժամերն ու տեւողությունը, ինչպես նաեւ բաժանորդի կոորդինատները զրույցի պահին: Խոսքը վերաբերում է ինչպես ներքին, այնպես էլ միջազգային հեռախոսազանգերին: Ըստ որում, զրույցների բովանդակությունը չի ձայնագրվում:**

**«Հույժ գաղտնի» մակագրված կարգադրությունն արվել է ապրիլի 25-ին, այսինքն Բոստոնի մարաթոնի պայթյուններից 10 օր հետո, եւ ուժի մեջ կմնա մինչեւ հուլիսի 19: Լրագրողների ձեռքն անցած փաստաթուղթը առաջին անգամ հաստատում է, որ Օբամայի վարչակազմը տվյալներ է հավաքում բոլոր քաղաքացիների հեռախոսազրույցների վերաբերյալ՝ անկախ նրանց կասկածելի լինել-չլինելուց:**

**«Գարդիանի» լրագրողները մեկնաբանությունների համար դիմել են ԱԱԳ-ին, Սպիտակ տանը եւ արդարադատության նախարարությանը, բայց երեքն էլ հրաժարվել են մեկնաբանությունից: Verizon-ը նույնպես չի մեկնաբանել դատական որոշումը, ինչը զարմանալի չէ, քանզի դատարանն ուղղակիորեն արգելում է նման մեկնաբանությունները:**

**Հայտնի չէ, արդյոք Verizon-ը ԱՄՆ-ում միա՞կ բջջային օպերատորն է, որին պարտավորեցրել են հատուկ ծառայություններին տվյալներ փոխանցել բաժանորդների հեռախոսազանգերի մասին: «Գարդիանը» միանգամայն հավանական է համարում, որ համանման կարգադրություններ արված լինեն երկրի բոլոր հեռահաղորդակցական ընկերություններին:**

**Թերթն անսովոր է համարում այն փաստը, որ տեղեկություններ են փոխանցվում անխտիր բոլոր բաժանորդների հեռախոսազանգերի վերաբերյալ: Արտաքին հետախուզության եւ դիտարկման դատարանը սովորաբար նման կարգադրություն է անում լրտեսության կամ ահաբեկչության մեջ կասկածվող առանձին անձանց կամ խմբերի առնչությամբ:**

**Պ. Ք.**

## Կորել է

Սերգեյ Ալեքսանդրի Պորյադինի Կիրովականի բժշկական ուսումնարանի դիպլոմը: Համարը՝ 400987, ռեգիստրի համարը՝ 1624, տրված 06.07.1990 թ.:

Համարել անվավեր:

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Ֆիրմա Գ.Ա.Խ.» ՍՊԸ-ի՝ «Սարավան» ՓՀԷԿ-ի շահագործման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավան համայնքի վարչական տարածքում Արփա գետի Դարբ վտակից 340,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2013 թ. հունիսի 13-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Սյունյաց Վոքը» ՍՊԸ-ի «Եղեգիս-3» ՓՀԷԿ-ի շահագործման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզի Գողթանիկ համայնքի վարչական տարածքում Եղեգիս գետից 1370,0 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2013 թ. հունիսի 13-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Համալսարանի ինֆորմատիկայի եւ դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ինֆորմացիոն կենտրոնի վարիչի թափուր տեղի համար `

▼ առնվազն մագիստրոսի աստիճան

▼ 2 տարվա աշխատանքային փորձ

Հավակնորդները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

Դիմում ռեկտորի անունով / նշել այն աշխատատեղը, որին հավակնում է դիմող անձը/

Ինքնակենսագրություն

Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները

Անձնագրի պատճեն

Լուսանկար՝ 1 հատ

Աշխատանքային գրքույկի պատճեն:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 10 օր՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին

հասցեն՝ ք. Երեւան,Տիգրան Մեծի 17 , 200 սենյակ,

հեռ՝ 59-70-84:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 6.6.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: